ՅՈՒԼԻՈՍԻՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Марта 1880 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул. д. № 5.

ՓԵՐԻԶԱԴԷԻ ԵՐԳԸ

ԳՈՐԾ ԱՆԲԱՐ ԱՑՈՑԻ։

Էվերի լեռներից,

17 Օգոստոսի, 1871։

Այսքան ամիսներ շարունակ ձանձրալարհոդվելով Անատոլիայում ես դեռ չէի տեսել այնպիսի գեղատեսիլ աշխարհ, որպիսի է Էվերի գաւառը։ Ահա երրորդ օրն է այստեղ գալուս, բայց ես դեռ միշտ հիանում եմ այս երկրի անտառների ու սարերի վրայ, այս երկրին, որ գրեթէ անծանօթ է Եւրոպացուն։ Մի մեծ հովիտ է դա, որ ձգվում է Ալիս գետի աւազանի հարաւակողմն՝ Սըվասի և Արաբկիրի միջ տեղը։ Աւելի կանաչագեղ է քան Զուխյերիան, աւելի անտառախիտ՝ քան Շվարցվալդը, և իրրև երկրային դրախտ ողողում է չորս գետակներով։

Սակայն Էվերի հովիտը մանաւանդ հէնց երկրորդ օրը այնպիսի մի չարագուշակ դէպք պատահեցաւ, որ Հռոմայեցու անգամ կը սարսեցնէր։ Երեկոյեան նոտած էի վրանիս առակ, ուր հաւաքուել էին և մերձակայ դիւղի մեծամեծները։ Որովհետև ձանձրալարհոդները այստեղ մի տեսակ թափառական լրագիրներ են, ուստի ամէն տեղից պատուաւոր անձինք շտապում են լուրեր բերանալու։ Մինչ մենք սուրճ վայելելով խօսակցում էինք, և ահա մի տարօրինակ անձ ներս մտաւ և մեր խօսքն ընդհատեցաւ։ Սա մի երիտասարդ էր, շատ կեղտոտ և շատ պատառոտուն շորերով։ Իւր ձեռքի երկայրի կացինը նշան էր նորա զերվիշ լինելուն, իսկ քայլուածքը,

շարժուածքը ու խօսուածքը խելագարի յատուկ էին։ Դերվիշ և խելագար, ահա երկու տիտղոս, որ ամէն ճշմարիտ մուսուլմանի համար պատկառելի են։ Ուստի պէտք էր ծածկել անախորժ տպաւորութիւնը և թոյլ տալ այդ անձռուռնի էակին նստել մեր շարքումը բարձերի վերայ։ Տեղական սովորութիւններին վարուց ծանօթ լինելով՝ շատ ուշադրութիւն չէի դարձնում դերվիշի կապկութիւնների վերայ, որ իւր խոշոր աչքերը երբեմն երբեմն ոլորելով՝ կրօնական խօսքեր էր քրթմնջում։ Բայց երբ նա մօտեցաւ ճրագին, որ դրուած էր վրանի մէջտեղ մի սեհոռի վերայ, ես նկատեցի մի տեսակ սևագոյն ապարանջաններ օղակ օղակ փաթաթուած նորա բազուկների վերայ։ Դէքա սարսափելի փոքրիկ օձեր էին։ Զըզուանքս շատ աւելի մեծ եղաւ քան թէ դէպի տեղական քաղաքավարութիւնը ունեցած յարգանքս. ուստի հրամայեցի օձերի տիրոջը դուրս գնալ, նորա պատասխանն եղաւ միայն՝ կէս գաժան, կէս ծաղրածու մի հայեացք, որ ինձ վերայ սևեռեց։ Բոլորովին կորցնելով համբերութիւնս, ձեռք ձգեցի մի փայտ և սպառնացայ դերվիշին ծեծել, եթէ նա իսկոյն չդուրս գնայ։ Հանդարտութեամբ վերկացաւ, դուրս ելաւ յետոյ-յետ քաշվելով, առանց աչքը ինձնից պարձնելու, և դրեթէ յուժ ձայնով ասաց ինձ. — անհաւատ, որդի անհաւատի, դու կը ճանաչե՞ս Փէհլևան Ապային։ + Ցետոյ անհետացաւ։

Նոր բարեկամներս տեսնելով որ ես արհամարհեցի իւրեանց սուրբը՝ կարծես թէ տարակուսեցան։ Ա՛հ, ասացին նոքա հեռանալով, Աստուած տղաւոր քեզ։ Դու վշտացուցիր Փէհլևան Ապային, լաւ բան չէ թշնամանալ խելագար դերվիշի հետ։

Ահնու ամենայնիւ ես բնաւ չվրդովեցայ։ Մնալով միայնակ, դուրս ելայ մի բոպէ գիշերվան մաքուր օդ շնչելու։ Երբ կատարէ դուռը բացի, արևելեան կողմից իսկոյն աչքիս ընկաւ մի լոյս, նման այն տարօրինակ սրշալոյսին, որ ցոլացնում է երկնքի վերայ մի հեռուոր հրդեհ։ Բայց սա նոր ծագող լուսինն էր, սակայն իր նոր լուսին. Արևելքի լուսինը՝ ծագկի նման փխրածաւ, արեգակի նման ճառագայթալից։ Ահ երբեմն, երբ արծաթափայլ բոլորակի ներքին մասը պիտի բաժանուէր հորիզոնի երկայն ու անկանոն դծից, որ կազմում էին սարերի գագաթները, մի հեռաւոր ձայն հնչելով հովտաների խորքից, որի վերևը գանվում էր մեր իջևանատեղը, բարձրացաւ մթութեան մէջ և ծաւալեցաւ չորսկողմ։ Ի՛նչպէս բա-

ցասրել այդ միակ, թափանցիկ և անսահման հնչիւնը։ Նա յիշեցը-նում էր Էօլեան քնարի հառաչանքները, բայց աւելի նուրբ, աւելի բարձր էր նա, կարծես մահկան կրծքից էր բղխում։ Այս ներդաշ-նակութիւնը հեռուից մի ծանր, ախուր և տարօրինակ երգ եղանակը, որ երգի առաջին վանկերում գրեթէ սուր էր, անզգալի աստիճաններ-ով ընդունում էր և վերջանում երկարատև հնչմամբ։ Նա փոփոխում էր մի քառորդ հնչիւնի չափ շրջանում, որպէս երբեմն Որփէոսի և Սաֆօի եղանակները։ Իսկ խօսքերը այնպէս պարզ էին արտասանո-վում, որ ոչ մինը անլսելի չմնայ ինձ։ դրանք մի հին ռամկի խօս-քեր էին, որ բոլոր Անատօլիոյ ժողովրդի մէջ տարածուած էր։ Մխիթ-արեան երգերից մին.

«Երգի՛ր սոխակ, եթէ քոյ սիրտն ուրախ է,

«Իմն գոնէ ուրախ չէ, սիրեկանս ինձնից հեռացել է։

Տաճիկ դանդաւոական երգը դրեթէ նոյն բանն էր ասում.

«Դարուն եկաւ, օրիորդը զբօսնում է գաշտերում,

«Մի թռչնակ կայ, որ երգում է նորա սրտի խորքից։

«Ոչը ես, հո՛գիս, եգիպտոսո՞ւմ թէ Բաղդատի երկնից տակ.

«Ես քանել եմ արեւմտեան ազգերի մի դափնեկ։

Ձայները փոքր առ փոքր հեռացաւ, նուաղեցաւ, վերջապէս խառնուեցաւ մեր բանակին մօտիկ հոսող առուակի մրմունջի հետ։ Ես յափշտակուած անշարժ ականջ էի դնում, մինչև վերջին հրն-չիւնը։ Երբ նա մարեցաւ, մերձակայ թփի վերայ նստած մի սոխակ սկսեց իւր գայլայլիկը։ Խեղճ թռչնակ, իզուր ես աշխատում. ինձ թվում է թէ դու սխալ ես երգում։ Իմ երեւակայութիւնը սքանում էր դեպի հովտի երգչուհին։ Երգչուհին ատում եմ, որովհետև այդ հրաշալի ձայնը միեւնոյն կնոջ ձայն կարող էր լինել։ . . ։

Էլվար-կալէսի. 19 Օգոստ.

Ես չկամեցայ հեռանալ գաւառից առանց Էլվարի բերդը կամ ամրոցը տեսնելու։ Դա բնակարան է սեղացի բէյի, որ կառավարում աւատական իշխան է, վերին և ստորին դասակարգից տէր, և որոյ մօտ, ասում են, սուլթանի հարկահաւաքները չեն համարձակ-վում փորձ փորձել։ Նա անխափան պահպանել է բոլոր հին սովո-րութիւնները. այդ տիպերը անհետանում են հետզհետէ, ուստի

ցանկալի է ուսումնասիրել նրանց։ Այս առաւօտն էր, որ ես մտայ այդ առիւծի որջը։ Այցելութիւն արի Բէյին և պէտք է խոստովանեմ, որ թէ իշխանը, թէ ամրոցը և թէ երկիրը հիացնում են ինձ. ես նշմարում եմ տաճկական կեանքը այնպիսի կերպարանքով, որ հաղիւ կարող էի երևակայել։

Ամրոցը կառուցուած է հովտի երկու զառիվայրի մէջ՝ մի մեծ ժայռի վերայ, թաքոր լեռան նման մեկուսի է կանգնել։ Նորա բարձր պարիսպները ամրացած են շատ աշտարակներով, վառօդի շտեմարաններով և ռազմամթերքով։ Մօտենալով այս ասպետական ամրոցին, կարծես ամօթ է զգում մարդ, որ չունէ զլխին սաղաւարտ և ձեռքում նիզակ, որպէս հին ժամանակի ասպետ։

Վրանս զարկի ժայռի ստորոտում։ Յետոյ իմաց անելով Բէյին, թէ ես կը ցանկայի պատիւ ունենալ նորան ներկայանալու, վեր մագլցեցի մի ոլորուն ճանապարհով, որ տանում էր մինչև մեծ դուռը։ Ինձ անցկացրին երկու խրամների վերայով, որոնց երկու կողմերը միանում էին շարժական կամուրջներով, և ես մտայ մի մեծ բակ, ուր բազմաթիւ զինուորներ ու զինուցիներ կային։ Ի վերջոյ մտայ մի դահլիճ, ուր նոյնպէս մեծ բազմութիւն կար, ուր և գտանվում էր մի լայն դիվան։ Բէյը նստած էր դրան դիմացի անկիւնում։ Մի բարեսեսիլ ծերունի էր սա, լրար, միջահասակ, արծուաքիթ, խառ ժակն ու նրբահայեաց, իսկ մորուքը կարծես Սուրբ Ծերոմի Հաղբերտ Եպս պատկերից լինէր օրինակած։ Զլխին փաթաթել էր Մարդարէի ժառանգներին յատուկ եղող կանաչագոյն տուրբանը, իսկ հագին ունէր լայն մուշտակ, չնայելով որ տարուայ շոգ եղանակն էր։ Երբ ներս մտայ, Բէյը մի հաշուի համար վիճում էր մի կապալառուի հետ, որ խորին պատկառանքով կանգնած էր նորա առաջ։ Նա նկատեց ինձ և ողջունեց, բայց չվերկացաւ տեղից, այլ ներողութիւն խնդրեց՝ պատրուակելով թէ ակար է, սակայն իսկական պատճառը այն էր, որ այդ ժայռարնակ մոլեռանդները մեղք են համարում քրիստոնեայի դէմ տեղից վերկանալը։ Առանց վշտանալու այդ խստութեան վերայ, նուիրեցի նորան ամենագեղեցիկ քաղաքավարական խօսքեր, որքան որ միանգամայն յիշել կարողացայ այն ըստ պէին։ Տեսնելով մի Ֆրանկ, որ խօսում էր արաբական բառերով հարուստ տաճիկ լեզու, Բէյը կարծես հիացաւ։ Կէս ժամից առել ինձ իւր մօտ պահեց, թէ և ամէն րոպէ նորան ընդհատում էին մարդիկ, խնդրելով նորանից հրամաններ կամ բերելով նորան թղթեր։

Մեր խօսակցութեան ընդհատման միջոցներուն ես դիտում էի Խանայիլ Բէյին. ամէն անգամ, երբ հաղորդուած լուրերը անհաճոյ էին թվում, նորա գորշ աչքերը վայրկեանակում էին և բարկութիւնից ամբողջ մարմինը դողում։ Անսահման ու անհաշիւ իշխանութեան ընտել մի այսպիսի մարդ, կարող է սարսափելի լինել երբ վերաւորուած է զգում իւր անձը։ Նորանից հեռանալուս ժամանակ ասաց, որ հրամայել է ամրոցի մէջ ինձ համար օթեւան պատրաստել։ Իսկ ես պատասխանեցի թէ վաղն արդէն կանգնած է ժայռի ստորոտում։ — Ոչինչ, ասաց նա։ — Բայց տեսնելով որ ես այնու ամենայնիւ ընդդիմանում եմ, ձեռքս բռնեց և առանց տեղից շարժուելու մօտերից ինձ պատուհանին, որ նայում էր դէպի ժայռի արեւելեան երեսը. այստեղ ես տեսայ, որ նորա ծառաները իմ բոլոր իրերէննելիս դէպի ամրոցն էին բերում և վաղն հաւաքելու պատրաստուած։ — Ես ձեզ արդէն ասացի որ այս գիշեր ինձ մօտ կը հանգստանաք, — ասաց նա քմծիծաղ ժպիտով։ Այժմ տեսնում էք ինձ ահա էվարի մէջ պատերազմած, մինչև որ ձնակատագրի փոփոխական կամքը թոյլ կը տայ դարձեալ ճանապարհ ընկնել։

---

20 Օգոստոսի։

Բնակարանս ամրոցի դրսի պատնէշին կից և կոփածոյ քարից շինուած մի գաւիթ է։ Սառրին յարկում գտանվում է մի մեծ սենեակ, ուր վաղն և իրերէննելս հանգստանում են վերջին ճանապարհորդութեան յոգնածութիւնից։ Սենեակս պարզարուած է այն պարզ շքեղութեամբ, որ յատուկ է հարուստ տաճիկների բնակարանին։ Պատուհաններից մինը պատնէշից բարձր է և մի գեղեցիկ տեսարան բաց է անում հովտի վերայ։

Երբ ցերեկի տաքութիւնը փոքր ինչ մեղմացաւ, ելայ ամրոցի ներսը շրջելու։ Էվար-կալէսին բուսականին սառաւ բերդապահ գունդ ունի, եթէ միայն իմ տեսած այն բոլոր զինուորները իշխանի զօրքին են պատկանում։ Նոցա մեծ մասը քուրդ էին, բայց կային նա և հինգ թէ վեց պանտան ցեղերի ներկայացուցիչներ։ Այնտեղ կային պնդակազմ լաղեր՝ սպիտակ շալի հագուստով, չերքեզներ՝ մորթէ գլխակներով, սեւամորթ Թուրքմէններ բնչպէս նաև արաբներ, դաշտարնակ տաճիկներ՝ երկայն շրջերով։ Բոլոր այս մար-

դիկը պարկոտած էին արևի տակ և բացի ծխաքարշ ծխելուց ու ձանձ որսալուց ոչինչ չէին շինում։ Առաւօտ երեկոյ միևնոյն կրկնու համը, ու հալիս երբեմն ընհատվող պարապորդութիւնը գրաւում և պահում էր նոցա կալէի մէջ։

Ամենատանդատոր ձարտարապետն անգամ կարողանալոց չէր դծագրել շէնքերի այդ տեղւոյ ածքի յատակագիծը, որին տուում են եվար։ Փայտի դագաթը տաստիկ թեքուած լինելով հարաւից դէպի հիւսիս, շէնքերը ցցուած են միևնոյ միտքի վերայ և դիմացի տան առաջին յարկը դառնում է ետևի տան նեքնայարկը։ Մի ընդարձակ բակ, ուր գտանվում են Իմայիլ Բէյի բնակարանը և մզկիթը, միակ հարթ տարածութիւնն է։ Երկակայ շէնքերը հաղորդակցում են միմեանց հետ սանդուխներով և կամարներով և բաժանուած են միմեանցից տաումնաձև պատերով, որոնք այդ շէնքերից իւրաքանչիւրը մի մի առանձին ամրոց են դարձնում։ Գլխաւոր աշտարակը կանգնած է բարձրաւանդակի դագաթի արևելեան կողմը։ Հարեմը (ինչպէս որ յետոյ տեղեկացայ) գտանվում է նորա կողքին, մի կամարաւոր պարիսպի մէջտեղում, որոյ գեղեցիկ ծառերը հեռուից երևում են. այս պարսպի ներքևը գտանվում է մի տեսակ լայն տափարակ, որին աւելի հեշտութեամբ կարելի է մօտենալ քան ժայռի միւս մասերին, որոնք ամենեղ ուղղահայեաց ու հայելեի պէս կոկ են։ Այս բերդի ինչպէս նաև Ս. Նաւասղեայի բոլոր ամրոցների ձարտարապետութիւնը որքան և օտարոտի թուէր մեզ, այնու ամենայնիւ զմա զօրեղական է, նման Հռենոսեան հին ամրոցներին. միայն մզկիթների ու բնակարանների զարդարանքի մէջ երևում է բիւզանդական և արաբական ձարտարապետութիւն։

Պատեհները տակաւին ամբակազմ են և միայն թնդանօթներ կնքող են նոցա ցնցել. բայց որտեղ կարելի էր կազմեցնել մարտկոցներ։ Բերդը իշխում է ամրոցի վերայ, որոյ երկու կողմերը հիւսիսից հարաւ մի մղնաչափ հեռաւորութիւն ունին իրարից։ Որմնատամների մէջ տեսնվում են հին հրացէնքեր, Սլժիրի հաչակաւոր պենսիոնական թնդանօթի նման. կան նաև անգղիական թնդանօթներ։ Թէ ոտքս ի՞նչ կերպով են հասել այստեղ,—չեմ կարող ասել։

Մինչ այս բանի վերայ էի մտածում, լսեցի որ ինձ կանչում են. յետս նայեցայ։ Նէ ահա Բէյը, կրծնած մի ածի թիւի վերայ, որին դեռ չէի տեսել, գալիս էր դէպի ինձ։ Սա մօտ երիտասն և հինգ-

ամեայ մի մարդ էր, բաւականին թխասպոյն, սևամազ, կարճ և խիտ մրուքով։ Նա մօլլայի շոր հագին էր։ Նրան Քեմալ-էֆենդի էին կոչում, որ Բէյի տան մօլլայի ու խորհրդականի կրկնակի պաշտօնն է կատարում։ Կարծում եմ, որ նա գլխաւորապէս իւր իշխանի ֆանատիկոսութիւնը գրգռելու համար է այնտեղ։ Բաւականին կըրթուած և նուրբ է երևում նա. ես ենթադրում եմ, որ նա այն սակաւաթիւ մուսուլմաններից է, որոնք յոյսները Աստուծոյ օգնութեան, բայց և առաւել իւրեանց ուղեղի և բազուկների վերայ են դնում։ Պերճախօս, թէպէտ և զգոյշ, և ինչպէս երևում է, գիտութեանց և գեղարուեստից ներկայացուցիչն է ամբոխում։

...Իսմայիլ Բէյը մօտենալով ասաց ինձ, թէ ով չնորհ ունի ինձանից խնդրելու։ Առանց իւր միտքը յայտնելու՝ սարսափ ինձ, ամբողջ բերդը ծայրէ ի ծայր անցնելով, մինչև մեծ աշտարակի ստորոտը։ Հարկ եղաւ վեր երթել սանդուխներով, որ հեշտ չէր տանտիրոջ համար։ Վեցերորդ գաւիթը հասնելով՝ մենք գտանվում էինք մի մեծ և բոլորովին մերկ սենեակի մէջ։ Հազիւ քանի մի վայրկեանից յետոյ կարողացայ նկատել կիսամթնի մէջ, պատի երկայնութեամբ, սհագին առաջմնատար անիւներ, կշռոց և շղթաներ, որպիսիք երբէք չէի տեսել կենդանութեան։ Կարծեցի թէ առաջևս դրած է տանջանաց մի հնադարեան գործիք. միմեանց ուշադրութեամբ դիտելուց յետոյ կարողացայ ճանաչել ժամացոյցի նեղքին մեքենաները։ Իսմայիլ Բէյի նպատակն ի՞նչ էր արդեօք, որ ինձ բերսւ կանգնեցրեց այս վազանցուկ ժամանակի մնացորդների առաջ։ Նա լուռ նայում էր նոցա վերայ հիացած ու ցաւալից աչքով։ Ինչ ձայնով որ նա կարող էր խնդրել ինձնից, դիցուք, բժշկել իւր որդուն, նոյն ձայնով ասաց թէ ինձնից է սպասում իւր ժամացոյցի բանելը։ Ես չկարողացայ ծիծաղը բռնել, հասատացնելով նորան թէ ժամադործական արհեստը ինձ բոլորովին օտար բան է։

— Բայց և այնպէս փորձիր, յաւելացրեց նա։

Ի՞նչ պէտք էր պատասխանել։ Տաճկի համար մարդոյ մարմինը և ժամացոյցը երկուսն էլ խորհրդաւոր մեքենաներ են, որ միայն ֆրանկները դիտեն կարդի բերել. նորան ասել թէ ոչ ժամադործ եմ և ոչ բժիշկ, այդ՝ ի զուր ժամանակի կորուստ է։ Մանաւանդ ես տեսնում էի, որ Բէյը չափազանց մեծ նշանակութիւն էր տալիս իւր ժամացոյցին։ Արևելքիք մեծ մեծ երեխաներ են, որոնց աչքում մանկական մի տուփ և մի ժամացոյց մարդկային հանճարի հրաշք-

ներ կն երևում, թէպէտ և այդ չէ սրգելում նոցա ուրիշ հանգամանքներում լրջամիտ լինել։ — Վերջապէս մտածեցի, եթէ ուշադրութեամբ քննեմ այս ժանգոտ երկաթները, գուցէ կարողանամ հասկանալ նրա կազմուածքը և գտնել խնդրամուն պատճառը։ — Սենեակում շատ լոյս չէր, բայց կամք ունեցողը կարող էր համոզուել հեռագնում ժամացոյցը։ Այնինչ ձեռքս գրել էի ճճճանակների շղթաներից մինի վերայ, յանկարծ լսեցի մի ձայն, նոյն ձայնը, որ նկատի առաջի գիշերը սիրտս յուզման մէջ էր ձգել.

Գարունն եկաւ, օրիորդը զբօսնում է դաշտերում,
Մի թռչնակ կայ, որ երգում է նորա սրտի խորքերում...

Ձայնը աշտարակի ստորոտից էր գալիս, այնտեղից, ուր ես սրդէն տեսել էի հարեմի տուներները։ Զարմանքից մի յանկարծական շարժուածք արի և այդ կերպով սաստիկ ձգեցի ձեռքս ուռած շղթան։ Ո՞վ դիպուած. ամբողջ մեքենայի մէջ մի անմեկնելի գործունէութիւն սկսուեց, միևնոյն ժամանակ և երկաթների շառաչիւնն։ Ժամացոյցը բանել սկսեց. բոլոր հանդիսականները հիացած մնացին կանչեցին. մի րոպէից յետոյ շարժողութիւնը նորից կանգ առաւ, բայց փոյթ չէ, տեսան որ միմեայն ձեռքով շօշափելս կարող էր կենդանութիւն տալ ժամացոյցին։

Աչքովկը մի փոքր հանդարտուելուց յետոյ երգի քանի մի տողը դարձեալ հասան ականջիս։ Ես ա կը ցանկայի հեռացնել բոլորին և մնալով միայնակ մի հնար գտնել երգչուհին տեսնելու. բայց գիշերը մօտենում էր։ Ես վայր իջայ Բէյի հետ միասին, խոստանալով ամէն հնար գործ դնել նորա քնած մեքենան զարթեցնելու։ Որովհետև այժմ առիթ ունիմ ամենայն առաւօտ քանի մի ժամ աշտարակի մէջ մնալու, զարմանալի կը լինէր եթէ մի կերպ չտեսնէի անծանօթ իշխանուհուն։

Իսմայիլ Բէյը վերադարձաւ տուն. ես հրաւիրեցի մոլլային իմ սենեակումս կաֆէ խմելու։ Ծխաքարշներս ծխելու ժամանակ Բէյմալի-էֆէնդին իւր ծպտեալ դրութիւնից փոքր ինչ դուրս եկաւ և կարծես տրամադրուած էր ուրախ ազատօրէն խօսելու։ Նորանից տեղեկացայ թէ բերդը սրդէն շատ հին էր համարվում դեռ այն ժամանակ, երբ Սելճուկ Թուրքերը խլեցին նորան Ռ—ո—Հնչից կամ Ստոբրին կայսերութեան Յոյներից։ Էլչարի առաջին մուսուլման իշխանը կոչվում էր Բայազիդ-Սալայ, որ Խաչակիրների ժամանակ հին բընակիչ

մի վախճանական Ֆրանսիայի Թագաւորի, որի անունը, մոլորի արտասանութեան ընդհանուր չկարողացայ հասկանալ՝ խօսքը անշուշտ Լուսինեան Հայոց Թագաւորի վերայ էր: Ինչ որ կը վերաբերի Իամայիլ Բէյին, պէտք է ասել որ նա, իւր նախորդների պէս, միահնծան իշխան է մնացել այդ ամբողջ նահանգին: Անշուշտ ոչ ոք չէ համարձակուել յարձակուել նորա վերայ, բայց Ռէշիդ փաշայի՝ Քրդերի դէմ արած հաչակաւոր արշաւանքից, որովհետև թվում է թէ մի կանոնաւոր զօրաբաժին երբէք չէ մտել այս ձորը:

Ես հարցրի Քեմալի-էֆենդիից թէ արդեօք Բէյը որդիք ունի՞: — Մի դուստր միայն ունի, պատասխանեց նա: — Վերջապէս տեղեկացայ թէ այդ աղջկայ անունը Ֆերիզադէ է, թէ նա տասն-չորս տարեկան է, թէ չորս օր է, որ իւր ազգականներից մէկի մօտ արած փոքրիկ ճանապարհորդութիւնից վերադարձել է ամրոցը: Այս բոլորը հետաքրքրութիւնս զրգռում են: Հովտի երգչուհին Ֆերիզադէն պիտի լինի:

---

22 Օգոստոսի:

Այսօր առաւօտ իմ հովտա թէմիրի հետ միասին դուրս եկայ ձիով: Կամաց ասուածը միևնոյն ժամանակ և՛ ոտիկան է և սուր-հանգամ. նա ուղեկցում է ճանապարհորդներին, նոցա համար օթևան և պատրաստել տալիս և պէտք եղած ժամանակ պաշտպանում է նոցա: Սովորաբար նա շատ վատ է կատարում իւր այս վերջի պարտականութիւնը: Թէմիրը իրրև բացառութիւն, շատ բարեբարոյ և շատ քաջ մարդ է, ինչպէս որ համոզուեցայ շատ հանգամանքներում: Նորան հանդիպեցայ երկու ամիս առաջ Տրապիզոնի լեռներում. խեղճութենից հանեցի նորան, տուի վայելուչ դէնք և գեղեցիկ հագուստ. այժմ վստահ եմ որ նա ինձ անձնուէր է: Զբօսնելու միջոցին նա ինձ պատմեց թէ Բէյը զրկուել է իւր կնոջից և չէ կամենում նոր կին առնել. և ոչ ուզում անջատուել իւր միակ աղջկանից, ուստի բոլոր ցանկացողներին մերժում է: Թէմիրը լսել էր որ նա արեգակի պէս սիրուն է: Հովտի այս կողմից, ուր ես գտանվում էի այն ժամանակ, նշմարում էի հարեմի բարձրահասակ ծառերը, որոնց կանաչագեղ ճիւղերը բարձրանում էին պարսպի կատարներից: Ծայրը, որ ամէն կողմից անմերձենալի է, այդ կողմից

մեղմ կերպով թեքվում է դեպի դաշտը. ծածկվում է կանաչ թփերով ու մացառներով։ Կէս բարձրութեան վերայ երևում է մի փոքրիկ ապիտակագոյն շէնք նման այն «մալինէին» կամ մատուռներին, որոնք շինուած են սուրբ մուսալմանների գերեզմանների վերայ։ Այստեղ ուրիմն երկու հայեցակէտ ունէի հարևմի վերայ. հովտից տեսնում էի նորա պատերը, իսկ ժամացոյցի աշտարակից՝ ոչ նէի նորա ներսի կողմը տեսնել։

Աւրտրև, այսօր առաւօտը աշտարակի մէջ անցուցի։ Չկարողացայ ծիծաղը պահել անյնելով այն անհնների առաջից, որ իմ գիտութեանս են յանձնուած։ Մի բոպէ անուշադիր թողի նրանց, որովհետև ուրիշ հոգսով էի զբաղուած։ Որոնում էի մի հնար աշտարակի ծայրը բարձրանալու. վերջապէս նկատեցի աստիճանի վերայ մի տեղակ երդիկ, որ ինձ այնտեղ կարող էր տանել։ Գոյայ մի տանպուխտ և քանի մի րոպէից յետոյ տանիքի վերայ էի։ Այստեղից կարողացայ տեսնել պարսկաղը իւր բոլոր մանրամասնութիւններով։ Մի սիրուն մարգագետին էր դա, մէջտեղում մարմարոնեայ ջրաբուխ և չորս կողմը տերևախիտ ծառերի բազմութիւն։ Ձախ կողմ, տերևների միջով երևում էր մի սպիտակ պատ. դա Հարեմը պէտք է լինէր։ Աշտարակը և բերդի պատերը բաղեղով ծածկուած՝ պաշտպանում էին հիւսիսային քամիների դէմ այդ կանաչազարդ ովազիսը, որ հին բընակչից նախորդներից մեկի կամքով ստեղծուած էր քարափի ծայրում։ Կէս ժամի չափ մնայի այդտեղ առանց պարտիզի մէջ մի կենդանի արարած տեսնելու և հետզհետէ յոյսերս իմ մէջ բաւականին թաբուած։

---

27 Օգոստոսի.

Աւրուն մի քանի առաւօտ անց եմ կացրել աշտարակի մէջ։ Ձեռնարկութիւններից այն, որին ամենից քիչ եմ համակրում, յառաջ է գնում. ժամացոյցը ժանգոտած է միայն, բաւական է կապել կարուած շղթան, և նա օրինաւոր մաքրելուց յետոյ կը բանի։ Մեկ ուղեւորի, երկու օրուայ մէջ գործս կ՚աւարտէի. բայց ես, շատ պատճառներով, աշխատում եմ որքան կարելի է երկարացնել գործը։

Երբեմն բէյլի մօտ եմ ճաշում, բայց աւելի յաճախ իմ սենեակում։ Ամէն անգամ երբ բարձրանում եմ նորա պահլեճի պրան

վարագոյրը, նորան միշտ զբաղուած եմ գտնում. բայց երբ ես մըտնում էի, հեռացնում էր ամենքին։ Հիւրասիրութեամբ կատարեալ Տաճիկ լինելով՝ ամենափոքր յանկութիւններին բաւականութիւն է տալիս. եթէ նա շատ էլ չխօսի, սակայն և այնպէս ուշադրութեամբ հսկում է որ ինձ իւր չափ և իրանից էլ աւելի պատուասիրեն։ Այսու ամենայնիւ շատ բարձր գաղափար չունի ինձ վերայ։ Ինձ հետ հօր պէս է վարվում և, եթէ իմ ասածներս նորա մըտքերի հետ համաձայն չեն, բաւականանում է միայն մի ներողամիտ ժպիտով։ Սորա փոխարէն մոլլան ու ես աւելի մտերմանում ենք. նա շատ տեղեր մտնէ և եկել, բայց կրծնամոլ մտնսուլման է, սակայն իմ մոլորութեանցս պատիժը վերջին դատաստանին է թողնում։ Նա ինձ պատմեց իւր ապաք ճանապարհորդութիւնները դէպի Դամասկոս, Պարսկաստան և Կոստանդնուպոլիս. մին և անգամ վնասուիկ է հասել։ Վերջապէս, սկսած այն ժամանակից, երբ նա նկատեց, որ ես այն մոլեռանդ քրիստոնեաներից չեմ, թոյլ է տալիս մեր մէջ կրօնական վիճաբանութիւն. նորա Խալամին վերաբերեալ մեկնութիւնները շատ հանճարեղ և իսկապէս կրթողական են։

---

30 Օգոստոսի.

Այս առաւօտ որսից վերադառնալիս այցելեցի ուալին, որ վաղուց նկատել էի ժայռի կողի վերայ։ Այս փոքրիկ մահալճանը ապաքուստ ոչինչ նշանաւոր բան չունէր բացի քանի մի կոփածոյ գլուածներից, նկարը կարելի էր առանել միմեայն չորս մերկ պատեր և մի տապանաքար, որի ծայրը տուբրանով փոխոխած գլխի ձև ունէր։ Այս բոլորը ինձ չէին հետաքրքրում. բայց դուրս գալով աչքս ձղեղի հարևի պատի վերայ, որ դիմացս էր։ Երկու մանուկներ հան աղջիկներ նստած էին մի որմնաճերպի մէջ. նոցանից մինը մի այլանդակ փոքրիկ նեգրուհի էր, միւսը անպատճառ Ֆերիդադէն սիրուն լինէր։

Ովալաձև տուների տակ ծածկուած բաւական երկար նայեցի նորա վերայ, որպէս զի և ոչ մինը նորա դէմքի դծագրութենից և ոչ մինը նորա հագուստի մանրամասնութիւնից չմոռանամ։ Ոտքերովին քնքուշ, բոլորովին սպիտակ ու կարմիր էր նա, ունէր մեծ մեծ սեւորակ աչքեր՝ լցուած անասելի քաղցրութեամբ, ճակատը կլէօպատա-

բայլի ճակատի նման փոքր, որ կիսով չափ ծածկուած էր սպիտակ ու կանաչ մետաքսէ քօղի տակ, իսկ երկայն ու սեաւ ծամերը փռուած էին ուսերի վերայ։ Մտաբերելով տաճկի բանաստեղծի ոգեւորուած պերճախօսութիւնը, նորա շքեղութիւնքը համեմատեցի սոխակի սիրած վարդի հետ, իսկ կուրծքը՝ ջրի հոսանքից կոկուած մարմարիոնի հետ, նորա մազերը սիրոյ ձեռների հետ, որք գերի են տանում մարդոց սրտերը։

Ֆերիզադէն հագին ունէր մի բրուսիական կերպաս, որ կօսի քօղի պէս թեթեւ է և չինաստանի մետաքսի նման փայլուն։ Հագել էր բաց կուրծքով մի փոքրիկ պաճկոնակ և լայն ու ծածանող վարտիք. արծաթեայ ասեղներով զարդարուած մի կանաչ գօտի փաթաթուած էր նորա մէջքին. կարծես թէ ամպերէն լիներ նորա հագուստը։ Նեդրուհին ըստ երեւութին Ֆերիզադէին հասակակից էր. նուբիացու տափակ քիթ ու լայն ականջներ ունէր. նորա հագուստի վերայ կարելի էր տեսնել ծիածանի բոլոր գոյները։ Դեղնագոյն սպակու հուլունքների բազմաթիւ շղթաներ կախուած էին նորա գլխէն բոլորովին մերկ կրծքի վերայ։ Նա նման էր այն պալատական թզուկներին, որոնք ասպետական վէպերի մէջ կրում էին կաթէի թագուհիների քղանցները։

Երկուսն իմիասին խօսակցում էին լորերի նման կարկաչելով։ Նեդրուհին կուչ էր եկել Ֆերիզադէից մի փոքր դէպի յետ, իսկ վերջինս պարսպի լորքում նստած կրթնել էր նորա ստամին։ Նա սպիտակ գժնիկները, որ ծաւալւում էին պարսպի երկայնութեամբ, ծածկում էին նորան իրանց սպիտակ ծաղիկներով ցանուած կանաչապատով։ Մի ձեռով հեռացնում էր նա այն ճիւղերը, որ շօշափում էին նորա ճակատը, իսկ միւս ձեռով հայց էր բրդում ապառնիներին, որոնք դուրս էին գալիս պարտիզում շինուած բոյնից։ Արծաթափայլ փետուրներով և գոյշ-մարգարտագոյն պարանոցներով գեղեցիկ թռչուններ էին դրքա. թռչկոտում էին ալիքների շուրջը, նստում էին նոցա գլխի, ուսերի և բազուկների վերայ։ Ես լսեցի նոցա խօսակցութենից մի քանի խօսք. լսածներս անվայել խօսքեր չէին. խօսքը իւրաքանչիւր ապառնու գեղեցկութեան ու արժանաւորութեան վերայ էր։

Մտաբերում եմ, որ այդ տեսարանից զմայլելու միջոցին լսում էի, առանց ուշադիր լինելու, մի տեսակ տարօրինակ նուագ, որ հնչվում էր մերձակայ թփի միջից, ինձնից մի փոքր հեռու, աշ-

տարակի հանդէպը։ Փոքր առ փոքր այդ հնչիւնները աւելի ուժեղ և աւելի երկայն դարձան։ Այդ՝ օձերը կախարդուղի քաղցր ու ներդաշնակ սուլմունքն էր։ Նոյն րոպէին աղաւնիները, որ նստած էին պատի սորոտում Ֆերիզադէի ձեռքից ընկած հացի փշրանքները ժողովելու համար, անհանգստութեան նշաններ ցոյց տուին. շուռտով թռան նոքա և մոտն իւրեանց բոյնը։ Մինը միայն մնաց մարդի վերայ. դա անշուշտ իւր տիրուհու սիրելին էր. որովհետև նորա վզին անցուցած էր կարմիր մետաքսէ օղամանեակ։ Յանկարծ Ֆերիզադէն, որից աչքերս չէի հեռացնում, սաստիկ գունաթափեցաւ և սարսռելով ցոյց տուեց իւր ընկերուհուն կարմիր մանեկաւոր աղաւնին։ Ես նոյնպէս նայեցի այն կողմը, ուր թռչնից տասը քայլ հեռու մի փոքրիկ օձ ոլորուած պառկած էր. միայն գլուխը բարձրացնում, խաղացնում էր թփում հնչող սուլոցի եղանակին համաձայն։ Սա այս երկրի լիժն էր, որին այլապէս քարը (aspic) են անում, մի զզուելի սողուն, տափակ գլխով ու բթածայր պոչով, որի խայթը մահացուցիչ է համարվում։ Խեղճ կախարդուած թռչունը մօտենում էր փոքր առ փոքր և գալիս էր ինքն իրան թշնամու առաջին զոհելու։ Եթէ անմեղ աղաւնին Ֆերիզադէին էլ չլսած կանէր, ես դարձեալ ձեռիցս չէի թողնիլ մի այդպիսի գեղեցիկ առիթ՝ սուղունը ոչնչացնելու։ Հրայանս լսուած էր, արձակեցի և օձի կտոնները երեք ոտնաչափ բարձր թռան օդի մէջ։ Աղաւնին, կախարդիչ հրապուրանքից ազատուած, թռաւ գնաց աղաւնեբունը։

Լացանիս ծուխը դեռ չէր ցրուել և ահա մի մարդ դուրս թռաւ թփի միջից. իսկոյն ճանաչեցի Փհհլևան-Աղային և պաշտպանողական դիրք բռնեցի։ Նա կանգ առաւ մի րոպէ իմ զգհի առաջ, և ինձ նետեց մի հայեացք, որի մէջ աւելի շատ թոյն կար քան օձերի մի ամբողջ բոյնի մէջ։ Միևնոյն ժամանակ բարձրացրեց աջ ձեռի երկու մատները և անհետացաւ։ Դորանով ուզում էր ասել, թէ ինձ հետ երկու հաշիւ ունի տեսնելու։

Ֆերիզադէն պատի ծայրից հանդիստուս էր գոռանում օձի ոչնչանալուն և դերվիշի դուրս գալուն։ Քանի մի քայլ յառաջ անցայ՝ նորան մօտենալու մտքով. նա իսկոյն փախաւ, ուղղելով ինձ մի ժպիտ, որ ես իբրև շնորհակալութեան նշան ընդունեցի։ Երկար մնացի կանգնած ուալնի դրանը, աչքերս այն տեղին յառած, որ նա թողեց գնաց։ Վերջապէս, որովհետև գիշերը մօտ էր, հրայանս առի ուսիս, խորին մտածմանց մէջ վերադարձայ տուն։

3 Սեպտեմբերի։

Վանի որ Ֆերիզպադէին տեսնել եմ, ցանկութիւն չեմ զգում հետաքննելու։ Ժամանակս անց եմ կացնում պատուհանիս տակ, նայելով առաջս, նարդիլեիս ծուխի մէջ, սիրուն երգչուհուս պատկերը։ Ամէն որսից վերադառնալուս նստում եմ բերդի վրանցը՝ մի սառների տակ և հետևից նայում եմ գոշշազոյն պատերի վրայով դէպի այն փոքրիկ կանաչավայրը որ Ֆերիզպադէի պարտէզն է։

Չեմ կարծում թէ նա իւր հօրը մեր հանդիպումն պատմած լինի, որովհետև այն ժամանակ պէտք է խոստովանէր, որ երեսը բաց է պիտի որել ինձ և այդ տեսակ բացատրութիւնը վտանգի մէջ կը բարձրացնէր։ Մանաւանդ բէյը այս ամբողջ շաբաթը չէ կարողացել երկար ժամեր անցնել հանրեմում։ Նա հեռագրում եմ որ նա Պօլսոյ հետ վէճ ունի։ Անցեալ օր նա ընդունեց նոր տարազի հրաման ստով և երկրին ամենևին օտար մի անձի այցելութիւն, դա Բարթրագոյն Վրան մի պաշտօնեայ պիտի լինի։ Այդ ժամանակից ի վեր հիւրընկալս բաւականին վատ տրամադրութեան մէջ է, և դժուար է նորան մօտենալը։

9 Սեպտեմբերի։

Հաս օրերից յետոյ, երեկ որսից վերադառնալով առաջին անգամն էր որ մնայ ուսին։ Նորա սալայատակի քարերից մինը տեղնից հանած և պատին դէմ տուած տեսնելով զարմացայ։ Մօտեցայ այդ լայնաբերան բացուածքին և տեսայ որ սա վեց ոտնաչափ խորութեամբ մի քառանկիւնի փոս էր, որի յատակում ձգվում էր մի նեղ անցք։ Յանկարծակի տեսնել թէ այդ անցքը որ տեղ է վերջանում, ներս մտայ և շուտով հասայ մի սրահի, որ ուղղահայեաց դիրք ունէր դէպի անցքը։ Լապտեր չունենալով հետս ի հարկէ չէի կարող հետազօտել այդ սրահը։ Նրբ յետ էի դառնում, և ահա մի մարդ դուրս թռաւ այն փոքրիկ հորի յատակից, որ տանում էր դէպի սրահը. զարհուրելի էր սա. բայց ես հաղիւ կարողացայ նորան տեսնել։ Մի վայրկեան չտևեց և ահա մի ծանր քարեայ կափարիչ ընկաւ գետին և ձանապարհը փակեց, ընկղմելով ինձ խորին մթութեան մէջ։

Ի զուր ջանացի բարձրացնել այդ ահագին քարը. նա նստել էր խոր ակօսների մէջ, որ ես իսկոյն և նէթ չէի նկատել։ Դերվիշը իւր վըէժն առաւ. ես կենդանի թաղուեցայ։ Մի ժամի չափ մնացի իբրև չքացած։ Սակայն վերջապէս մի փոքր սիրտ առի և ինքս ինձ ասացի թէ կա՞յ արդեօք փրկութեան յոյս։ Հաւանական չէր, որովհետև դերվիշը անշուշտ պատրաստութիւնը լաւ էր տեսել։ Նախ և առաջ պէտք էր իմանալ թէ ուստեղ էի։ Արդեօ՞ք այս գեհենափորը քարահանք էր, մառան էր, թէ մահու գերեզման։ Բարեբաղդաբար քանի մի լուցքի ունէի մօտս. դուրս խլեցի թղթակալիս միջից թղթի կտորներ, ոլորեցի և վառեցի։ Այդ յանկարծադիւտ ջահերի աղօտ լուսով վերադարձայ դէպի սրահը. նա ձգուում էր բաւական հեռու ուղիղ գծի վերայ. միապաղաղ քարի մէջ փորուած, որ մեղմ կերպով դէպի վեր էր բարձրանում։ Հասկացայ, որ բերդը դիսի հետ միացնող գեհենափոր ճանապարհի մէջ էի գտանվում. Անատոլիայի մէջ իմ տեսած բոլոր ամրոցները սորա նման գեհենափոր անցքեր ունին, որոնց օգտակարութիւնը պաշարման ժամանակ շատ հեշտ հասկանալի է։

Շարունակեցի ուրագ քայլերով յառաջ գնալ, ահ ու դողով խնայելով թղթէ ջահերս. հասայ մի բարձր ու լայն դահլիճի, որ նոյնպէս ժայռի մէջ էր փորուած։ Սա մի տեսարան էր ներկայացնում, որին ամենևին չէի սպասում. պատերի քանդակների մէջ կարգով շարած էին քանի մի հարիւր եւրոպական հրացաններ, դահլիճի մէջտեղում պրուած էին տասներկու հատ թնդանօթներ իւրեանց սայլակների վերայ։ Նաև զէնքի և զինապաշարի տակառներ կային այս զինարի մէջ, որ հաղորդակցութիւն պիտի ունենար պալատի հետ. բայց դորա ճանապարհը չէի կարողանում գտնել, թղթի կտորներն էլ գրեթէ սպառած էին։ Իզուր հետազօտում էի դահլիճը։ Սկեղեցւոյ խորաններին նման փոքրիկ խորշեր փորուած էին իւրաքանչիւր պատի վերայ։ Վայր գլորած և թոզի մէջ պառկած քարէ կուռքերը և ջարդած քանդակները վկայում էին որ այս գեհենափորը ժամանակով մի վաղեմի կրօնի տաճարի է եղել։ Ծոցնած, յուսահատուած, նստեցայ մի սիւնի պատուանդանի վերայ և երկար րոպէներ ամենասխալ մտածմանց ենթարկուեցայ։

Գնացքի և խօսուածքի մի չչնչիւն լսելով՝ երազում կարծեցի իրանս։ Սակայն ձայները մօտեցան, քայլերը աւելի որոշ հընչեցին կամարների տակ. առաջին շարժուածքս եղաւ յառաջ վազել դէպի

այս անակնկալ վրկիչները. յետոյ մտածեցի, որ աւելի լաւ է նախ եւ առաջ իմանալ թէ ինչ մարդիկ են եկողները. ուստի քաշուեցայ մի կողմ եւ սպասեցի։ Դահլճի միւս ծայրումն եղող մեծ բացուածքը, որ եա հանգիստ նկատած էի, պայծառ լուսով լուսաւորեցաւ. երեւեցան Բէյը եւ մոլլան, մինը եւ միւսը ձիւթի ջահեր բռնած ունէին։ Հարեմի սպասաւորներից երկու հատ լուռ էակներ հետեւում էին եւ բերում այն մեծաքանակ պղպեղներից մինը, որոնց մէջ նաեւ երի վերայ վառօդ են պահում։ Միւսը դրին սպասաւոր, ջահերը իւրեանց ձերքերի ճոպաղից առան եւ դնացին կանգնեցան պատերի մօտ։ Նման այն բրօնզէ արձաններին, որոնք լոյս են անում պալատների նախադահլճներում։

Իսմայիլ Բէյը գոհ օրով էր մտիկ անում դահլճի շուրջը։ Ջահերի լոյսը ցոլանում էր հրացանների, թրերի եւ թնդանօթների վերայ — Նայի՞ր, ասաց Բէյը, այժմ վստահութիւն ունիմ, մոլլա։ Դեռ կարծո՞ւմ ես, որ հեշտ կը լինէր ծերացած առիւծի առագաստը ջարդել։

— Ես հաշտութեան ծառայ եմ, պատասխանեց մոլլան։ Ինձ չէ վայելում հաստատ կենալ մուսուլմանների մէջ ծագող պատերազմի պատասխանատուութեանց։ Սուրը գիրքը արգելում է եղբօրը յարձակուել եղբօր վերայ։

— Ես միայն պաշտպանում եմ ինձ։ Բարձրագոյն դուռը ուղղում է իւր արբեցող օֆիցերներին եւ իւր ուխտադրուժ դատաւորներին էլչիլր ուղարկել։ Ահա տասը գալ է, որ էլչիլրը պատ եւ երջանիկ է։ Ես չեմ կարող թոյլ տալ, որ այդ հաւատապոխ թուրքերի հետ միասին Սըվազ եւ Էրզրում նահանգների թշուառութիւնքը մուտ գործեն այստեղ։

— Այդ երեք հարիւր հրացաններով չես կարող ընդդիմանալ կանոնաւոր զօրքի։ Բացի դորանից՝ թէպէտեւ նոքա հագնուած են իբրեւ անհաւատարիմ ղնոտորներ, սակայն եւ այնպէս Սուլտանն է նոցա ուղարկողը, որին պարտ ենք հնազանդիլ իբրեւ հաւատացեալներ ղլխին եւ իբրեւ Մարգարէի փոխանորդին։

— Մօլլա, երեսս նայիլ եւ պատասխանիլ։

Շատ դարեր առաջ իմ նախնիքս, որ կալուածների տէրունդ էր Հոռհոլում, եկաւ էլչիլր իւր Սելճուկների հետ միասին եւ հետը բերից սուրբ դիրքը։ Քսան հազար հոգուանոց ունէր նա, եւ Սուլտանն թագաւորի չափ ոսկի, իւր առնը թագաւորաց ընդունման էր։

Ինչո՞ւ թէ ուր կին թափառում այդ ժամանակներում մեր սուլթանի նախահայրքը, այս սուլթանին որ նստած է այժմ կրջանկութեան բարձրագոյն Դրանը։ Նոքա ոչխար կին արածացնում Հիհունի և Սիհունի մէջ տեղ և անդրում կին անապատում, ճրագն աթաթախ, կաշու հանդերձով, թալանելով Խարիզմի կարաւանները։ Եւ ո՞րովհետև այդ ծուրանաբնակ կռռդպաշանների յոջորդները նուաճեցին Կոստանդնուպօլիս և կահիրեում խլեցին Մարգարէի դրօշակը ուստի նոքա չեն տէր պիտի հանդիսանա՞ն։ Ես պիտի տեսնեմ իմ դեղջուկներս խառնուած այդ դլնուորական խմբերի հետ, որոց կրթում են Ֆրանկ սպայներ։ Ես պիտի թոյլ տամ, ինչպէս Տամկասանի միւս մասերում, որ քրիստոնեայք և հրէայք իւրեանց եկեղեցիք իւրեանց դործարանները և անհատաներին ուրիշ շէնքեր կանդնեցնեն իմ հողի վերայ։ Դու որ երեք անդամ ուխտի ես դնացել և ուսել ես աստուածաստաք վարդապետութիւնք, կարո՞ղ ես ինձ հպատակելու խրախուսել և կարծել որ մարդպետն չի պաշտպանիլ ինձ կռուի մէջ։

Մօլլան հառաչեց, առանց պատասխանելու։ — Դո՛նէ, ասաց նա վերջապէս, նախադդուշութիւնք արա՛ծ ես, որպէս պի այժմեն իսկ չիտակածէին դիմադրելու գաղափարիդ վերայ։

— Անհոդ եղի՛ր, այս շէնքի անդունդները կերասնդիցյ այստեղ բերողները չդիտէին անդամ, թէ ինչ էր նոցա կտած բեռը և ես լռեանեարիս վերայ վստահութիւն ունիմ։

— Փէհլևան-պապայի վերայ կ՚ը վստահ ես, որ քո հրամանները լավ կողը գործերին աջակցել է։

— Դերվիշը լռեանեարի մէջ ամենից խոհեմ և ամենից հաւատարիմն է։ Չէ՞ որ նա ութ օր առաջ հաղորդեց ինձ կայսրական դալը, որին Սըվազի փաշան անցեալ օրը ուղարկել էր ինձ մօտ։

Ի հարկէ ակամայ, հակառակ իմ ցանկութեան լսեցի այս բոլոր խօսակցութիւնը։ Հէնց առաջի խօսքերից ես հասկացայ հիւրընկալս գաղանիքը։ Պէտք էր որ նա չիմանար այդքան տեղեակ լինելս։ Իսկապէս, աւելի լաւ չէր լինիլ նորա համար, որ ինձ յայտնի լինէին նորա գաղափարների գաղանիքը։ Ես կարող էի, հանդամանքներին նայելով, խափանել այն վտանգներից միքանիսը, որոց նա ենթարկվում էր, կամ դդուշացնել նորան իւր անխոհեմութեան հետևանքներից. կարևոր դէպքում Եւրոպացու խորհուրդը կարող էր նորան օգտակար լինիլ. բայց դեռ մինչև այդտեղ չէինք հասել։

Բէյը, Քէմալին և սպասաւորները հեռացան։ Ես հեռուից և լռե-

լեայն հետևեցի նոցա։ Ա յսպիսով հասայ մի ոլորուն սանդուխի, որոյ դուռը բաց էր և որով ես վեր ելայ նոցա ետևից։ Նրբ լոյսի առաջին ճառագայթները և օդի առաջին ալիքները զգալ տուին ինձ որ պիտի դուրս գանք գետնափորից, կանգ առայ։ Նոքա շարունակեցին իւրեանց ճանապարհը և շուտով այլևս չէլսեցի նրանց։ Մի լա՛ւ քառորդ ժամ համբերութեամբ սպասեցի, յետոյ տասնուհինգ աստիճանի չափ վեր ելայ և մտայ մի փոքրիկ սենեակ, ուր պարտիզբանութեան վերաբերեալ շատ գործիքներ կային։ Նորա կիսաբաց դուռը թոյլ էր տալիս ինձ տեսնել երկնքի մի կտորը. ես էլ «Երկնային կատակերգութեան» ճանապարհորդի նման հիացմամբ ողջունեցի

Il dolce color d'oriéntal zaffira [1]).

Փորձեցի մի հայեացք ձգել դէպի դուրս։ Մի մարգագետին, մէջտեղը մի ջրուխս, մեծ մեծ ծառեր, բաղեղնապատ որմեր, ահա ամենից առաջ տեսածներս։ Մի սևագոյն աշտարակ բարձր ի գլուխ կանգնած էր այդ կանաչազարդ օթևանի մօտ։ Հարեմի պարտէզն էի մտել։ Եթէ կասկածէի, լսածներս ինձ պիտի համոզէին։ Ես լսում էի ծիծաղ, երգ, կանացի խօսակցութեան արագաթռիչ նախադասութիւններ։ Թանձրախիտ ծառերը ծածկում էին աչքերիցս այն խումբը, որից հնչում էին այդ ուրախ աղաղակները. յետոյ մի տեսակ լռութիւն տիրեց, և մի սիրեցեալ ձայնի, Ֆերիզադէի ձայնի հնչիւնը ուղիղ մինչև սիրտս թափանցեց։ Նա կարդում էր մի պատմութիւն, որից ես հետևեալ յատկանիշ քաղուածքը լսեցի.

«. . . Նա կտրեց կախարդ Ջաֆէրի գլուխը, առաւ իւր ձիու վերայ Թագաւորի աղջկան և փախաւ գնաց անապատը։ Կէս օրին հասան նոքա մի տեղ, ուր եօթն արմաւենիք կային։ Բևեր-էդ-Ջամման վայր իջեցրեց Թագաւորի աղջկան, ասելով այս երդը. — Արքայադուստր, քոյ յօնքերը գ ա գ տաւի կորութիւնն ունին և քոյ հասակդ է լ ի ֆ տառի նման է։ Ես լաց եղայ տեսնելով քեզ վանդակի յետևը. այժմ ես նման եմ յոգնած սուրհանդակին, որ դեռ երկար ճանապարհ ունի անցնելու։ Նա պառկեցաւ կանաչ գետնի վերայ, արքայադուստր մօտ և համբուրեց նորա ուսը։ Այս համբոյրը

---

1) Աբեղեան վերստին ալթոյժ դոյներ։

թագաւորի սպիկանը սկսաւ պէս պէս դէղձիկ և անպէն քարի պէս պատուական թուեցաւ։ Նա մարեցաւ և ուշքի եկաւ, ասելով հետեւեալ երգը. — Սէյադի զաւակ, երջանկութիւնը քաղցր է երբ միսիթարութիւնը մօտ է դժբաղդութեան։ Ես կը լինիմ քոյ անցեալ ապառնին, և դու կը լինես իմ պայմանականը . . .»

Այդ քերականական այլաբանութիւնը լսելով հեշտ էր ճանաչել «Հազար և մէկ գիշերներ ին» նմանեցրած վէպերից մէկը։ Պատմութիւնը անսահման էր, նոյնքան լի երկդիմի կատակներով, որքան զուրկ առողջ դատողութիւնից։ Գալլան-ի թարգմանութեան մէջ մենք տեսնում ենք սուլթանուհիներ եւրոպական ձևով հագնուած. իսկ ինչ որ կը վերաբերի բնագրին, դուք տեսաք ահա նորա մի հատուածը։

Յոգնածութիւնից ու սովից կիսամեռ էի. բարեբաղդաբար կաշուէ պարկիս մէջ գտայ մի փոքրիկ սիմինոզի հաց, որ վեր էի առել առաւօտը որսի դնալիս։ Քաղցս յագեցնելուց յետոյ մի անյաղթելի ցանկութիւն զգացի քնելու, և այդ ցանկութեանը տեղի տուեց մինչև անգամ այն զուարճութիւն, որ զգում էի լսելով Ֆերիզադէի երգը։ Պառկեցայ սանդխտի գաւթի մի անկիւնում չոր տերևների մի խրձի վերայ և խոր քուն մտայ. ամենից լաւը հենց այդ էր գուցէ, որովհետև չէի մտածում մթնելուց առաջ դուրս գալ այդ երկիւղալի տեղից, ուր բերել էր ինձ անակնկալ դէպքը։

Մի մեծ ալմուկ զարթեցրեց ինձ. դեռ իսկոյն չկարողացայ մտաբերել թէ որտեղ էի. մութ խաւար պատել էր ինձ։ Մի փայլակ, որին հետևեց մի որոտումն, լսելքս դլուխս բերին։ Կայծակի կապտագոյն փայլը ցոյց տուեց ինձ նոյն միջոցին չոր տերևի անկոպլենա, կիսաբաց դուռը, պարտէզի թանձր ծառերը։ Ձորի վերայ փոթորիկ էր վերկացել. անձրևը հեղեղի նման էր գալիս, սոսկալի շառաչիւնով ծալվում ու կոտրտվում էին ծառերի ճիւղերը։ Դուրս եկայ պատսպարանից. մի նոր փայլակով տեսայ որ ձորաձաշտը փոթորկից յուզվում էր ; հեղեղատի ջրերը փեղկելով ամբարտակները տարածվում էին ամենայն կողմ։ Այդ սարսափելի եղանակը նպաստում էր իմ փախչելուն. այսպիսի մի գիշեր կարելի էր ապահով լինել, որ հարեմի շուրջը վտանգաւոր մարդու հանդիպելու չէի։ Հեռանալ մտածեցի անցնել պարտիզի միջով, հասնել պատնէշի այն տեղը, ուր սեռած էի Ֆերիզադէին ապաւէնների հետ խաղալիս և իջնել մինչև կէսից աւելի հողով լցրած խրամատի ստորոտը։ Դրժ-

բաղդաբար ոչ թոռ ունէի և ոչ սանդուխտ. պատի դլխից վայր ցաթիկել յանդգնութիւն կը լինէր, որովհետև քսան ոտնաչափ բարձր էր։ Այս մտածմանց մէջ քանուց տարուբերուող տերևների միջով նկատեցի ճրագով լուսաւորուած մի պատուհան։ Գնացի դէպի այն կողմը. կարծելով՝ թէ հարևան քնակարանի մէջ դուցէ դանեմ մի թոռ, սանդուխտ կամ մի չնչին ձող, որ կարող էր դիւրութիւն տալ ինձ վայր իջնելու։ Ճրագով լուսաւորուած սենեակը անշուշտ կանանոցի դլխաւոր դահլիճն էր, որովհետև բաց դրան միջով նշմարեցի փառահեղ գորգեր և աւելի նուրբ զարդարանք, քան պալատի միւս դահլիճներում։ Պղնձեայ մի թռչնաձև կանթեղ ազօտ լոյս էր տարածում շրջապատող առարկաների վերայ։ Այն մեռաքսկ չուանը, որով այդ կանթեղը կախած էր առաստաղից, իսկապէս այն առարկան էր, որ հարկաւոր էր ինձ փախուստս ապահովելու։ Ինձ այնպէս թուեցաւ թէ բնակարանում ոչ ոք չկար, ուստի անյապաղ ներս մտայ։ Յատակի վերայ փռած գորգի մէջտեղը դրուած էր մի կրակարան, ուր բուրում էին անուշահոտ խունկեր, որոց սփռած անուշ շնչոյը ծխի միջով տեսայ Ֆերիզադէն մի բազմոցի վերայ քնած։ Այս փոթորկալից դիշերի շոգից նեղացած՝ իւր ծաղկեկազմ մեծ ապաքսեայ վերմակը մղել էր դէպի ոտները։ Երեսին փռած ոսկեհիւս քօղը պաշտպանում էր նորան մժեղների խայթերից. երկայն ծամերը դուրս էին փռուած մարդարտապարդ թաշկինակի տակից. շնչառութիւնը հնաոճախչափ նուագներով ծածանում էր. նորա թափանցիկ սրիմարիկի քօղով թեթև ծածկուած կուրծքը։ Մի վարդագոյն փոքրիկ ոտ՝ բազմոցի ծայրում՝ դուրս էր նայում վերմակի ծալքերի տակից։

Խաւարից նոր էի մտել լուսոյ մէջ, փոթորկի ազմկից անցել ամենազմայելի տեսարան։ Եմենի կնգրկի թափանցող բոյրը գուցէ այնքան չէր հարբեցնում ինձ, որքան աչքերիս առաջ դրուած տեսարանը։ Դրանը մօտ անշարժ կեցած, հրացանիս կրծնած, էլ չէի մտաբերում ինձ այս դժխիմը բերող պատճառը, այլ միայն մի բանով էի զբաղուած, այն է, նայելով։ Սակայն դուրսը փոթորիկը կըրկնապատկում էր իւր կատաղութիւնը։ Անձրևը բաղխում էր թմբուկի նման հնչող մագաղաթէ պատուհաններ և քամին տանիքի կրամիաներն էր վեր պոկում. նա թափանցում էր սենեակի մէջ դրան և վառ ծածկուած պատուհանների միջով և ցնցում էր պայծառ գոյներով հիւսուած գորգերը։ Մի թնդաձայն երկաթտեղ որոտում

կարծես ուզեցաւ հիմքից շարժել Էլմարի քարաժայռը։ Ֆերիզադէն զարթնեցաւ։

Տեսնելով իւր առաջ ինձ այնպէս ոտքի վերայ կեցած, գէնքը ձեռքս, շորերս անկարգ և անձրևից թրջուած, ես կարծեցի թէ նա կրվախենար և օգնութիւն կը կանչէր։ Ոչինչ չեղաւ. իշխանի տղայ, հարևմի ազատհոգի թեան մէջ մեծացած, Ֆերիզադէն չգիտէր ինչ է վատնդը։ Մեծ սևեռակ աչերով ինձ նայեցաւ և տեսնելի զարմացած, քան թէ երկիւղած ասաց ինձ։— Ա՛յստեղ ի՞նչ ես անում։

Գանի մի խօսքով պատմեցի թէ մոլորվել էի ծառերկրեայ անցքերում, և թէ մտել էի պարտէզ առանց գիտենալու թէ ուր եմ գնում։

— Առաջ կարծեցի, պատասխանեց նա, թէ դու օդի միջով ես եկել. Ֆրանկները Հինդիստանի բնակիչների նման կախարդներ են։ Բայց ի՛նչպէս սիրտ երթաս։

Բացատրեցի մտադրութիւնս և հարցրի թէ կարելի՞ էր արդեօք վեր առնել կանթեղը գնալու։

— Ա՛ռ, ասաց նա, և դնա՛ շուտով։

Այսպէս ասաց կանթեղը, ձեռք ձգելի մեռաքսէ գնալը. բայց երբ սիրտ դուրս գնալի չկարողացայ վճռել։ Յառաջ գնացի դէպի Ֆերիզադէն, որ այժմ միայն մտաբերեց թէ քօղ չունէր երեսին։ Կարմրեցաւ և ծածկեց երեսը այն քօղով որ նորան մժեղաթևի տեղ էր ծառայում։ — Անունդ ի՞նչ է, հարցրեց նա միևնոյն ժամանակ. ես ասացի նորան անունս. նա իզուր չանք արաւ կրկնել այն։ — Քոյ անունը, ասաց նա, մի խելագարի կամ մի քաջ մարդու անուն է։ Անշուշտ մէկը կամ միւսը սիրտ լինել այստեղ մտնելու համար և քեզ նման վատահ լինելու համար այստեղից դուրս գալու։ Եթէ պատահմամբ խափշիկներս զարթնէին, գիտե՞ս ինչ վտանգի սիրտ ենթարկուէիր։

— Վեր մեծ վտանգներ կարելի է սրհամարհել, Ֆերիզադէ, քոյ ձայնը լսելու և քոյ աչաց զմայլելու համար։

— Ո՛վ Ֆրանկ, լռի՛ր։ Դուք ամենքդ դատարկագլուխ մարդիկ էք, ինչպէս որ հայրս ասում է և դու ինձ ապացուցանում ես, որ նա չէ սխալվում։ — Նա նորից կարմրեցաւ, որովհետև քօղը վայր էր ընկել։ — Ձե՞ռ գնում, ասաց նա։

— Ես կ'երթամ, եթէ թոյլ կը տաս ինձ վերադառնալ մի օր։

— Փորձիր թէ կ'ուզես. երկու անգամ հետզհետէ չի կարելի

մտնել այստեղ։ Որտեղից պիտի ներս գայիր։

— Դեռ ոչինչ չգտեմ. բայց եթէ ձանապարհ չգտնեմ, ես ինձ համար ձանապարհ կը հարկեմ, ասացի ես իբրև ձշմարիտ ծովադնաց։

Աղայ նորա ձեռքը և համբուրեցի։ Նա զարմացաւ այդ յարգանքի վերայ, որ ընդդէմ է արևելեան սովորութեանց։ — Միմիայն ստրուկներն են, ասաց նա, որ համբուրում են կանանց ձեռքը։ — Այս յանդիմանութեան տակ չմնալու համար, ես համբուրեցի նորա թշերը, աւելի շուտ քան թէ նա կարող էր պաշտպանուիլ։

Ուսաբանին մօտ էր, պէտք էր շտապել։ Ֆերիդադէն անցաւ սենեակի միջով և մինչև դուռը հետևեց ինձ։ — Ինչու հաւատաս ցեաղների կրօնը չունիս, հառաչանքով պատասխանեց նա, երբ ես նորան մնաս բարև ասի։

Ահատարանի անհոգ կոչնականի նման նորից սրտաբին խաւարի մէջ ընկայ։ Մեծ դժուարութեամբ դիմեցի դէպի պատնէշը, վերջապէս գտայ կատարը, չուանս պինդ կապեցի և պատրաստուեցայ վայր իջնելու։ Երեսս դարձնելով, Ֆերիդադէն տեսայ ձրագով լուսաւորած դրանը կանգնած։ — Յիսութիւն, — ասացի նորան։ Նա չպատասխանեց՝ վախենալով՝ մի գուցէ նորա ձայնը լսէին. Բայց ոչջունեց ինձ տաճկական հին ձևով, այսինքն ձեռքը կրծքին դնելով։ Ընդունց մեծ դժուարութեան վայր իջայ և չուանս թողեցի պատի ծայրին կախուած։ Ֆերիդադէն կնամարդ է և ես յոյս ունիմ, որ նա չի թողնիլ երևան գալ այդ գաղանիքը, որ կարող էր թէ ինձ և թէ նորան վնաս բերել։ Գառորդ ժամից յետոյ ես տուն հասայ առանց որևիցէ մարդու հանդիպելու։ Այդ բէյը, որ կամենում է կանոնաւոր զօրքեր ջնջրդել մի պահապան անգամ չունի բերդի պատերի վերայ, նա կանծում է անշուշտ, որ Ազիսհիլ հրեշտակապետը կը բռնի սորա տեղը։

---

11 Սեպտեմբերի։

Ընդքան բազմատեսակ յուզմունքից, այնքան յաղթահարած արդելքներից մի յիշատակ միայն մնացել է մտքումս — Ֆերիդադէն։ Չեմ կարող միտքս հեռացնել նորա սևորակ, կրակոտ և քաղցր աչքերի պատկերից։ Ինչպէս այդ հայեացքը կարող է լինել միևնոյն

ժամանակ այնքան անմեղ և այնքան հրապոյր։ Ֆերիզադէն եւրոպայի աղջկայ պէս միամիտ չէ. այս երկիներում խօսակցութեան ազատութիւնը չափ ու սահման չունի։ Սակայն ամենախիստ կրօտիկան անգամ ոչինչ չէր կարող գտնել նորա խօսքի, դէմքի կամ շարժուածքի մէջ։ Նա ինձ յիշեցնում է իսպանական նկարչութեան դպրոցի այն կուսանքը, որոնք աշխարհային կրքերի բոլոր վշտերը իւրեանց սև աչերի մէջ դրոշմած՝ երկինքն են համբարձում։

Այս վերջին երկու օրը պալատը ամայի է դարձել։ Իսմայիլ բէյը այս առաւօտ ձանապարհ ընկաւ դաշտի գիւղերը շրջելու։ Անշուշտ նա կամենում է, իւր դիմադրութիւնը կազմակերպելու համար, պատրաստութիւններ տեսնել մուխթարների կամ տանուտէրերի հետ։ Ես վախենում եմ, որ այդ արտաքին նշանները չշտապեցնեն վտանգը։ Ամէն կողմից լսում եմ, որ մեծ վէզիրը խիստ հրամաններ է տուել՝ էվլադը ընդհանուր օրինաց ենթարկելու։ Այդ գաւառի անկախութիւնը մի տեսակ քաղաքական անկանոնութիւն է, որ, ինչպէս երևում է, էլ երկար չէն ուզում համբերել։ Անշուշտ բէյը կարող էր ընդդիմանալ մի քանի ամիս, եթէ պատրաստութիւն տեսնէր. բայց նա ամէն բան կիսատ և թերի է անում. ոչ սարերի անցքերը և ոչ էլ ամրոցի ամենամերձ մուտքերն են պաշտպանած։

Ես կը ցանկայի, որ ձակատագիրը շատ խիստ չվարուէր հիւրընկալիս հետ։ Թէպէտև նա իմ հմտութեանը մեծ նշանակութիւն չէ տալիս, սակայն շատ քաղցր է վարվում ինձ հետ։ Երէկ առաւօտ՝ ընկերակցելով նորան մի քանի մղոն իւր ձանապարհորդութեան մէջ՝ նորան ասացի թէ ժամացոյցը նորոգուած պատրաստ կը լինի և բերնիցս դուրս թողի հեռանալուս մասին մի խօսք։ Նա խօսքս կարեց ասելով թէ ինքը ասածս այդպէս չէ հասկանում, և թէ յոյս ունի դեռ երկու ամիս էլ պահել ինձ։ Օտարի տանը այդպէս երկար հիւր մնալը ամենևին ընդդէմ չէ Արևելքի սովորութեանց։ Բնակարանները այնքան ընդարձակ են, ապրուստի միջոցները այնքան աժանագին, նորեկ մարդիկ այնքան հաղուագիւտ, որ ես հաւատում եմ էվլադի բարեկամներիս ուրախութիւն պատճառելը շահունակելով մնալ նոցա մէջ։

Դերվիշը, որ երևի կարծում է թէ ես դեռ հարիւր ոսկի խորը դեռևի տակն եմ, ձանապարհ էր ընկել արդէն իւր իշխանից առաջ հիւսիսային ձանապարհով, անշուշտ որևիցէ նոր պատգամ

կատարելու համար։ Խոստովանում եմ որ, քանի որ գիտեմ նորա հեռանալը կալէից, աւելի ազատ եմ շունչ քաշում։ Սակայն քէն չունիմ նորա դէմ, ինչպէս դուք դուցէ կարծէիք. Ֆերիզադէն տեսնելու համար նորան եմ պատրաստ։ Մօլլան այստեղ է. մենք դրեթէ ամենայն օր միասին ենք ճաշում։ Նա աւելի եւ աւելի զգոյշ է հանդիսանում, երբ խօսակցութիւնը տեղական պօլիտիկայի, բէյի անձնաւորութեան կամ նորա ապրկայ վերայ ենք դարձնում։ Սակայն լաւ հաւատացած եմ, որ նա հարեմի մէջ գնալ գալ ունի, ճանաչելով Ֆերիզադէն որպէն շատ փոքր հասակից ի վեր։

Աշունքը մօտ է. տերեւները ներկւում են կարմիր դոյնով եւ ծիծեռնակի երամները սրանում են երկնակամարի տակ։ Կիզիչ արեւը մեղմացել է. մեզը քօղաւորում է Հորիզոնը եւ ամէն երեկոյ արեւմուտքը շառագունում է վառ կրակի գոյնով։ Անսաօլհայում սա ամենից սիրուն եղանակն է տարուայ։ Առաւօտից մինչեւ երեկոյ շրջում եմ մերձակայ գեղատեսիլ դիւղերի մէջ. բարեկամ եմ գարձել այդ բարեսիրտ գեղացւոց, որոնք ուրախութեամբ ընդունում են ինձ, հիւրասիրում են իւրեանց կովերի ամենամաքուր կաթնով եւ ամենալաւ պտուղներով։

Ա՛ի այսպիսի զբօսանքից վերադառնալով՝ նորից մտայ ուալէին։ Ամէն բան այնտեղ այնպէս էր, ինչպէս առաջին այցելութեանս օրը։ Բարձրայարկ շարժուն սալաքարը, ինչպէս նորա տակը գանուող փոսի մէջ եւ պտոյտ քարէ պուրը։ Նա փակ էր, եւ ես իզուր ջանք էի անում բանալու, երբ մտաբերեցի փակելու այն տարօրինակ ձեւը, որով հեաքերը զննած էի Երուսաղէմի մօտ, Ալքայական գերեզմանների վրայ։ Էլվարի ատրներկրեայ անցքը նոյն հնարքով էր կողբուած։ Շատ կարելի է որ այդ անցքի գաղանիքը մոռացուել է նորա փորոյնների յաջորդների մէջ եւ դուցէ բէյն էլ չգիտէ։ Իսկ Փեհլեւան ալան, — զարմանք չէ որ նա գիտենայ այդ գաղանիքը, մինչդեռ ուալէին նորա սովորական բնակարանն է երբ նա այստեղ է։

---

15 Սեպտեմբերի։

Երեկ հանդիպեցայ Ֆերիզադէին պալատի կամարներից մինի տակ. նա վերադառնում էր հանքային ջրի մի բաղանիքից, որ երկու մղոն հեռու է այստեղից։ Նա շատ պատիկ էր երեւում, կարմիր ակի

(սաֆիան) բարձր թամբի վերայ թառ կլած և դլխից մինչև ոտքը բեհեզեայ շապով ծածկուած։ Իր նեգրուհին հետն էր. նոցա ետևը մի սևամորթ դայեակ տանջում էր մի թշուառ ջորի իբր մարմնոյ ծանրաբեռն գեղեցկութիւններով։ Տասն քայլ առաջ՝ ապիտակ տուրբանը դլխներին, սուրն ու աստձանակը կողքներից կախած, ձիավարում էին երկու համր խափչիկներ, որոնց տեսած էի բէյի դինապանում։ Մօտիկս անցնելու ժամանակ Ֆերիզադէն վայր ձգեց իւր մեղեսկի տէրողորմեան։ Մոքումս դրի անձամբ տանել այն նորան տալ։

Նոյն երեկոյեան ժամը ութին ուալիի մէջն էի։ Վեր առայ քարէ կափարիչը և, որպէս զի ոչ ոք յետևիցս չփակէր այն, աւազով լցրի այն փորուածքը, որոյ մէջ նա հագնուում էր։ Անցեալ շաբաթուայ գլուխս եկածի վերայ սարսուռ զդալով, մտայ դետնափորի մթին խորքերը։ Նորից տեսայ դինապանը, սանդուխտը և պարտէզը։ Ինը ժամին մօտ էր երբ այդտեղ հասայ։ Երկու օր էր որ եղանակը փոխուել էր. Սեպտեմբերը շոգից խեղդող շաբաթներ ունի որոց վիջոցում գիշերահաւասարի փոթորիկները ժողովուում են երկնքում։ Քամու շունչ անգամ չկար, որ հանգիստ քնած ջերի երեսը խորշոմէր. կարծես արձձի շոգիք էին ներշնչածդ։

Ֆերիզադէն չէր կարողացել դիմանալ իւր սենեկի ծանր մթնոլորտին. ես նորան գտայ պարտիզում, միայնակ, կակուղ բարձերի վերայ պառկած։ Նա գալս տեսաւ առանց զարմանք յայտնելու, բայց քօղը երեսին քաշեց։ — Քոյ աէրողորմեան եմ բերել, ասացի նորան։ — Փպտալով առաւ և շնորհակալ եղաւ։ Ես նստեցայ նորա կողքին. նա դանգատուում էր շոգից, և սարսափում էր մնածելով փոթորկի վերայ, որ պիտի տեղար։ Քանի մի րոպէից յետոյ կարծես ընտելացաւ նա թակարդ ընկած եղնիկի նման և քօղն անգամ ձգեց։ — Ի՞նչ սիրուն ես, Ֆերիզադէ, ասացի նորան դարձեալ։

Մեզանից մի քանի քայլ հեռու շատրվանը հանդարտ հոսում էր իւր գաղջ ջրերը մարմարոնեայ աւազանի մէջ. մարդագետինը թեթև թեքուածքով բարձրանում էր մինչև հարեմի սենեակները։ Պարիսպը ու աշտարակները ծածկուում էին մեր աչքերից տերևակապ կամարի անշարժ կանաչով, որոյ տակ մենք պատսպարուած էինք։ Ուրիշ շշունջ չէինք լսում, բացի փոքրիկ ազբիւրի մրմունջից, երկնքի աստղերը չէինք տեսնում, բայց կանաչ խոտի մէջ տեղ տեղ փայլում

էին լուսատու բզեզները։ Ես մոտացել էի Ֆերիզադեին։ Փոքր ժամա-նակ է ի վեր մեր խոսակցութեան մէջ, որ սկզբում այնքան կենդանի էր, երկարատև լուռ ընդհատումներ էին մտնում։ Ցանկարծ զգացի որպէս թէ ինձ քարշում էին նորա կախարդիչ սև աչքերը, որ կարծես լոյս էին տալիս գիշերուան մէջ։ Բազուկներս գրկեցին նորա մէջքը, որ կակուղ եղէգնի նման ծալուեց։ Շփոթուած ու զարմա-ցած՝ հանդարտ յետ քաշուեցաւ՝ ծածկուելով իւր բուրնուսի մէջ։— Տուն գնալու ժամանակ է, ասաց նա։ Դու էլ պիտի գնաս։

Ես չգնացի։ Քամին, կայծակի արագութեամբ փչեց արևմտքից և շարժեց ծառերը շատրավանի շուրջը։ Ծառերից մինը թօթափեց մեզ վերայ իւր մեծ մեծ վարդագոյն ծաղիկները։ Այդ հոտաւէտ անձրևից ազատելու համար Ֆերիզադէն յառաջ շարժուեցաւ այնպէս, որ գիրկս ընկաւ։ Ծառի ճկուն ոստերը մինչև գետին կորացան, կար-ծես կամենում էին ծածկել մեզ աշխարհից, որ մենք մոռացու-թեան էինք տուել։

Քամիները գրուել էին այն գոլորշիքը, որ ծածկում էին հո-րիզոնը մեր աչքերից. շուտով երկնակամարը երևաց մեզ իւր բո-լոր շքեղութեամբ։ Երկու թռչող աստղեր սլացան երկնքում և լող-կան դեռահաս ջրերի մէջ։ —Ա՜խ, ասաց սնոտիապաշտ Ֆերիզադէն, ահա մի տխուր նախագուշակութիւն. մենք Աստուծոյ բարկութիւնը իջեցրինք մեզ վերայ։

Շատ չտևեց և ահա թանձր ամպեր կխտացան սարերի վերայ. լուռ փայլակներ նետում էին նոցա մէջ կրակէ կարճ շան-թեր։ Անցեալ շաբաթուայ նման մի փոթորիկ էր պատրաստվում։ Պէտք էր մեզ բարեաւ ասէինք միմեանց։ — Ես կը մեռնեմ, եթէ ինձ թողնես հեռանաս, շշնջաց Ֆերիզադէն վերջին համբոյրը տա-լով ինձ։ — Ես խոստացայ երբէք չթողնել նորան. բայց ի՞նչպէս պիտի պահեմ խոստումնըս։

Այդ րոպէից սկսած ապագայի հոգսը ինձ տանջում է և ա-մենայն տեղ հետևում է ինձ։

---

19 Սեպտեմբերի։

Գրեթէ ամէն երեկոյ ճանապարհ եմ ընկնում դէպի հարեմ. ես գիտեմ, որ այդ նշանակում է գլուխս վտանգի ենթարկել. բայց

սէրը լռեցնում է խոհեմութեան ձայնը. խելագարի նման սիրում եմ Ֆերիզադէն. ինքն իրանս բոլորովին նուիրում եմ նորա ձայնը լսելու և նորան տեսնելու զուարճութեանը: Քանի մենք միասին ենք, երջանկութեանս զգացմունքը տիրում է ինձ և արգելում է մոռանալ մեր շուրջը պատող վտանգները վերայ: Մեր խօսակցութիւնը կատարեալ երեխայի խօսքեր են: Նա ինձ պատմում է իւր զբօսանքը սարերում, երբ նա, դեռ մանուկ հասակում, ընկերակցում էր իւր հօրը, թէ ինչպէս չորս տարի առաջ եկաւ մուհարրեմի ժամանակը և թէ ինչպէս նա հպարտութեամբ ընդունեց կնութեան կոչումը՝ քօղը երեսի վերայ առնելով, որ այլ ևս երբէք չպիտի թողնի տանից դուրս ելած ժամանակ: Յետոյ գալիս են անվերջանալի հարցմունքներ Եւրոպայի, Արևմուտքի կանանց և մանաւանդ կախարդական Փարիզի վերաբերմամբ, որոյ անունը շլացնում է աչքերը ցոյց երևակայութիւնը: Շատ կը ցանկայի գնալ այնտեղ, ասում է նա շատ անգամ, բայց երբէք չէի համարձակուիլ հարցնել եւրոպական ձևով և երեսս բոց շրջել այնքան մորթոց առաջ:

Երէկ, հենց այն րոպէին երբ ճնաս բարեաւ էինք ասում միմեանց, մի մատանի ընկաւ նորա մատից շատրվանի աւազանի մէջ. չկարողացանք գտնել: Այս արկածը զարթեցրեց նորան անուախապաշտութեան բոլոր վախն ու երկիւղը և յիշեցրեց նորան անցեալ երեքշաբթի թուղթ աստղերը: Ես վախում եմ ամպագոյնից, ասում է նա երբեմն: Իմ կեանքը պիտի նմանի տարուայ այս եղանակի օրերին, որոնք առաւօտը պայծառ են և մեղմ, իսկ երեկոյեան փոթորիկներով են վերջանում:

Ալաճայ-Ռէօյ. 22 Սեպտեմբերի:

Բէյը հասել է Ալաճայ-Ռէօյ. դա այստեղից դէպի հիւսիս տանող մղոն հեռու մի գիւղաքաղաք է, ուր տարէնը միանգամ շատ բազմամարդ տօնավաճառ է լինում. Ֆերիզադէն հրաման է ստացել գնալ այնտեղ իւր հօր մօտ: Զգիտենալով թէ ի՞նչ պիտի անէի ահագին ամայի ամրոցի մէջ, ես ինքս էլ միտքս դրի գնալ տօնավաճառ: Մեծ յոյս չունէի նորան տեսնելու, բայց գոնէ մօտիկ կը լինէի նորան, և ես փոխադրեցի վրանս նորա իջևանատեղի դիմացը:

Բէյլը ընդհանուր ժողով ուներ այդ օրը, ուր բոլոր նշանաւոր մարդիք գալիս են նորան այցելութեան։ Երեկոյեան ժողովում էր իւր վրանի տակ քրդերի ու լազերի գլխաւորներին։ Այդ ամենից ես լաւ բան չեմ գուշակում։ Բաւական է միայն չորս կողմը նայել, համոզուելու համար թէ, այս ամբոխը, որ փառաբանում է Բէյլին նորա անցուդարձ անելու ժամանակ, բոլորովին սառն է դէպի պօլիտիկան։ Ազգերի ապստամբութեան ժամանակները անցել են։ Համայիլ Բէյը հազիւ միայն մի քանի մի անուիսպաշտ անձանց վերայ կարող է յոյս դնել, իսկ դիւղացիք տեղներից անդամ չեն շարժիլ։

Ֆերիզադէին տեսայ։ Կէս օրի ժամանակ իւր դայեակի և փոքրիկ նեգրուհու հետ գուրս եկաւ վրանից. ես անցայ նորա կողքով. նա ձեռքը կրծքին դրեց, կամենալով ցոյց տալ, որ ճանաչէց ինձ. բայց շուտով ներս մտաւ և ես մնացի միայնակ ոճնավաճառի ահագին դաշտի աղմկալից անապատի մէջ։

Դառնալով դէպի վրանս, հանդիպեցայ Փէհլիվան-աղային, որ իւր սովորական կախարդութիւններով զմայլեցնում էր հանդիսականաց մի խումբ։ Նա ինձ տեսաւ, գլուխը կորցրեց, և փախաւ մինչև անգամ առանց իւր օձերը պարկի մէջ դնելու։ Հարցուփորձ արի Քեմալ-էֆէնդիից դերվիշի անճնաւորութեան վերայ. բայց իմ ծպտեալ բարեկամը բաւականացաւ միայն գլուխը շարժելով առանց կարծիք յայտնելու։ Խեղճ մոլլան հետզհետէ աւելի տխրում է. Բէյի հետ միասին ձաշած ժամանակ հազիւ թէ բան է ուտում, այլ նստում է աչքերը խոնարհած, և առանց մասնակցելու խօսակցութեան։

Ալմաթիլ. 24 Սեպտեմբերի։

Ալաձա-Քէօյը բոլորովին անտանելի դարձած էր ինձ համար։ Ֆերիզադէն աւելևիլն անտեսանելի է. նա միայն շաբաթի վերջը կը վերադառնայ Էլմալի։ Ուստի այս առաւօտ լուսաբացից առաջ ձի հեծայ և ուղևորուեցայ դէպի մի դեղեցիկ անտառ, որոյ առաջին ծառերը սուզերարկում են Ալաձա-Քէօյը. նա տարածվում է, սառում են, մինչև Սև Ծովը։

Ժամերով շարունակ արշաւեցի անտառի մէջ։ Ուրքան հեռանում էի, այնքան սակաւ էի հանդիպում դիւղերի։ Շուտով հասայ մի տեղ, ուր ոչ մարդկային ձայն էր լսվում և ոչ փայտահատների կացնի աղմուկը։

Կ՛երևի թէ ինձ ամէն կողմից շրջապատող գեղեցիկ ծառերին աշխարհի սկզբից ի վեր ոչ ոք ձեռք չէ տուել։ Այն շաւիղով, որով ես գնում էի, անշուշտ հին ժամանակներում անցուդարձ էին անում կարաւանները, որք երկրի ներսի մթերքը տանում էին դէպի Ծովափնեայ նաւահանգիստները։ Վաճառականութիւնը այսօր աւելի դիւրին ճանապարհներ է բանել և անտառում այլևս չեն հնչվում երկայնաշար, մինը միւսից կապած բեռնակիր անասունների զանգակների միանուագ ձայները։ Վայրենի անասունները ևս երկիւղ չունին իւրեանց հանգստութիւնը վրդոված տեսնելու. շատ անգամ տեսնում էի ծառամիջի մարգերում այծեամների խմբեր, որք արածում էին աղբիւրների շուրջը բուսած խոնաւ մամուռը։

Այդպէսով հասայ մինչև բաւականի բարձր լերան սառոյտը։ Համնելով նորա գագաթը, ես զարմացայ և հիացայ աչքիս առաջ ունելով ոչ միայն կանաչագեղ հովիտը, ոչ միայն սպիտակագոյն գիւղերի մի շարք, որք մինը միւսից յետ ցրուած էին անտառի մէջ, այլ և — թէպէտ հեռու, սակայն պարզ տեսանելի, բաց կապոյտ երկնքի տակ մուգ-կապտագոյն-ծովը։ Իմ կեցած բարձր գագաթից հովանոցի շառաւիղների նման ձգվում էին ամենայն կողմը բլուրների շղթայք։ Նոցա ապառաժուտ կողերի վերայ բուսած էին ոչ միայն թթենիք, ասպիներ և մրտենիք, այլ և մեր Ֆրանսիայի կաղնիները, մեր կնձնիք և կասկենիք։ Այդ ծառերը գետնի թեքուածքի պատճառով չկարողանալով ուղիղ վեր աճել, կորացած կախուած են օդի մէջ և նոցա կատարները շոկվում են դէպի վեր։ Աշունը ներկել էր նոցա տերևները տարբեր գոյներով, կարմրագոյն, գեղին, մինչև շուշանեգոյն. անգամ։ Բլուրների մէջտեղը բացվում էին աւելի ճոխ բուսականութեամբ ծածկուած տալաճուխներ։ Արեգակի ճառագայթը այստեղ այնտեղ թափանցում էր տերևների միջով մինչև կարկաչահոս ջրերի մակերևոյթը, որք փայլում էին փշրուած հայելիի բեկորների նման։ Վերջապէս հորիզոնի ամենայեռին սահմանում, ծովեզրի աւազից ու ձկնորսների ծովախորշկի խրճիթներից անդին երևում էր ծովը իբրև այս պատկերի յետնակողմ։

Այս ծովը որ անակնկալ կերպիւ աչքիս առաջ ունեի, չէ՞ որ ցոյց էր տալիս ինձ գնալու ճանապարհս։ Չէ՞ որ նա խորհուրդ էր տալիս ինձ փախչել և նորա թեթև քամիներից տանել մեզ, Ֆերիզադէին և ինձ դէպի այն եզերքը, ուր մեզ այլ ևս ոչինչ չի սպառնալ միանգամ սիրել։ Ծանր քայլերով իջայ մինչև մօտակայ գիւղը,

որին ասում էին Ալմաստիլ: Սա նման է այն փոքրիկ դիւղերին, որ կարելի է տեսնել մեր անտառների մէջ, հեռաձ հողերի մէջերում:

Այս վայրենի, գրեթէ հիւսիսային ընութեան մէջ ամէն բան յիշեցնում է ինձ Ֆրանսիան: Կախարդութիւնը փարատուած է. ես միմիայն վերադարձիս վերայ եմ մտածում հիմա: Ֆերիզադէն, որ միայն կարող էր պահել ինձ Ցաղկաստանում, չի մերժիլ ինձ հետ գալ. նա բաւականին մատաղահաս է, և ինձ այնքան սիրում է, որ կարող է փոխել իւր հայրենիքը: — Քեզ հետ, ասաց նա ինձ, մինչև աշխարհի ծայրը կ'երթամ:

Էլվար-Կալէսի, 28 Սեպտեմբերի:

Ահա արդէն վերադարձայ ամրոցը. այստեղ գտայ Բէյլը և իւր ընտանիքը: Էլվարի խաղաղ պատերի վերայօք պատերազմի շունչ է անցել: Թնդանօթները դրուած են որմաճեպերրի մէջ և բակերը այնպէս լցուած են բաշի-բոզուկներով, որ հազիւ կարելի է շրջիլ նոցա մէջ. բայց ամէն բան սրտաբին ձևերի մէջ է կայանում, և երկիրը նոյնպէս թոյլ է պաշտպանած որքան նոր եկած ժամանակս: Բէյլը, ծանրադէմ և անհանգիստ, դողում է ծերացած նժոյգի նման, որ դարձեալ միանգամ փողի ձայն է լսում: Մի երկու անգամ նա խօսք է արել մօտալուտ արկածքի վերայ. ես կարծեցի թէ նա ինձ սիրահ առաջարկէր այդ դործում մի դեր խաղալ: Մօլլան աւելի տխուր և աւելի լուռ է քան երբէք: Իսկ Փէհլիվան-աղան,—նորան դեռ չէն տեսել այս հովտում:

Այս բոլոր յուզմանց մէջ ես միմիայն Ֆերիզադէի և իմ վաղահասելու միջոցների վերայ էի մտածում: Պղճմանքս տանջում է, երբ ես Բէյլի հիւրընկալութեանը շնորհակալ լինելու փոխարէն պիտի նորա աղջիկը խլեմ. բայց չէ՞ որ աւելի մեծ յանցանք կը լինէր թողնել Ֆերիզադէին: Այլև իմ սէրս թոյլ չէ տալիս ինձ դանդաղելու, առանց նորան հեռանալու միտքը սիրտս պիտի կոտրէր: Ինքս ինձ ասացի նոյնպէս, թէ չեմ կարող թողնել նորան այն վտանգների տակ, որոց կ'ենթարկէր նորան իւր հօր յանդուգն հպարտութիւնը: Մի ամսից, դուցէ, պատերազմ կը ծագի այս գաւառի մէջ, և ես բէյլի նման յոյս չեմ դնում բարեխօս հրեշտակների վերայ, որք կարող էին ազատել բերդի բնակիչներին կոտանդնուպօլսի դրմբերից:

Իւր բոլոր զբաղմանց մէջ Բէյը չէր մոռացել ժամայոյցը։ Նա վայրէն արդէն պատրաստ է մանգալու։ Այս առաւօտ ժողովուրդեան մեծ աշխատանքի առնչ ամրոցում ներկայ գտանվող նշանաւոր անձինք . եւ զարկ տուի ձօճանակին . սկսաք առնչելն շարժմունքը ողջունեցին եռանդուն բացագանչութիւններով։ Իսմայիլ Բէյը այնպէս գոհ վերադարձաւ տուն, որպէս թէ նա արդէն մի յաղթութիւն արած լինէր։

Վաղը պիտի երթամ Ֆերիզապէյի մօտ։ Ես նկատեցի մի լաթի կտոր հարեմի պատի ծայրին կպցրած, այդ նշան է, որով նա ինձ յայտնում է, թէ անվախ կարող եմ երթալ և թէ նա ինքը հեռացրել է իւր կանանցը։

---

29 Սեպտեմբերի։

Տեսնելով իմ դալը, Ֆերիզապէյն վեհս փաթաթուեցաւ ու հետեւեց ինձ։ — Ես կարծում էի թէ դու ինձ մոռացար, ասաց նա։ — Ես նորան տուի մի ադամանդեայ մատանի, որ գնել էի Ալաձա-Փէջյի տօնավաճառում, կորցրած մատանու տեղը դնելու համար։ Ես էլ ուզում եմ քեզ մի ընծայ անել, պատասխանեց նա։ — Այծի նման թեթեւաշարժ ու համարձակ վազեց նա դէպի պատնէշը, մագլցեց դէպի կատարը և սկսաւ կոտրատել սպիտակ դժնիկը և վայրի վարդերը, նոցանից մի փունջ շինելու համար։ Ես տեսնում էի նորան աստղերի լուսով, պատի կատարին վերայ ուղիղ կանգնած աշխատելով ամենագեղեցիկ ճիւղերը ձեռք ձգել կամ նա կախվում էր պատից այն կողմը մի վայրենի վարդ ձեռք ձգելու, որ բուսել էր քարերի ճեղքում։ Երբ քաղելը վերջացաւ, նա ժողովեց այդ բոլոր ծաղկունքը իւր վերարկուի փէշի մէջ և եկաւ դէպի շատրվանը։ Իւր փնջեակը կազմելու համար, նա թաթախում էր ամեն մի ճիւղը աւազանի մէջ և շարայարում էր միւսներին։ Երբեմն մի փուշ խոցոտում էր նորա փոքրիկ մատները, որ նա իսկոյն անհամբերութեամբ բերանն էր տանում։ Ցեղոյ քաղեց լոյն սերմներ, կորնթեան սիւնագլխի ականտուսի նման ձեւակերպուած, շարեց փնջի շուրջը և այդ բոլորը կապեց իւր մեխսգեայ տէրոպրամեայով և ինձ ընծայեց աղբիւրի մարգարիտներով թաղած բոլորովին թարմ ծաղիկները։ Ես կամենում էի առնել միայն ծաղիկ փունջը, սակայն հարկ եղաւ մեղսիկները նոյնպէս ընդունել։

Այս ինձ յանդիմանեց տխուր կերպարանք ընդունելուս համար։ — Ի՞նչ հոգս ունես դու այսօր, անաց նա։ — Ես աշխատեցի ոչքան կարելի էր սպարզ կերպիւ հասկացնել իրերի վիճակը։ Խեղճ աղջիկը ուրախանալէ վերջ իմացաւ թէ աշխարքս լիքն են հեռուններով, հանճարներով և կախարդներով ինչպէս արաբական հեքեաթները։ Միայն իրականն է որ նորան երևակայական է թվում։ Ես չդիտեմ թէ նա լսեց ու հասկացաւ իմ կարծիքներս, բայց երբ նորան առաջարկեցի հետս առնել Ֆրանսիա, — ուր որ երթամ հետդ կը գամ, ասաց նա, աշխատ ժով։ — Սակայն չուռով մտածմանց մէջ ընկաւ և աչքերուն արտասուքով լցուած։ — Հայրս ի՞նչ պիտի լինի։

Երեկոն անցուցի նորա սիրտը հանդարտեցնելով և մխիթարելով։ Վերջը նա նստեց կողքիս, գլուխը դրեց կրծքիս և մրմնջաց. — Սիրում եմ քեզ, և յաւիտեան քոնն եմ։ Երբ կը հրամայես հետդ կը գամ, բայց ինչ հարկ կայ թողնել այս տեղերը, ուր մենք միմիանց տեսանք ու սիրեցինք։ Մենք որքան երջանիկ պիտի լինեինք այստեղ, Ծերունի հօրս մօտ, իսկ աղաւնիներիս, ով կը ասէ նրանց ուր մնացեալ կերակուրը։

Նորան այդ մեղմաղօսութիւնից դուրս խլելու համար նկատեցի այն հրաշքները, որ նա պիտի տեսնէր Եւրոպայում, մեծ մեծ քաղաքները, նոցա պալատները, նոցա կամուրջները, նոցա պարտէզները, կրակով մանեկող կառքերը, նաւերը, որք լայնատարած ծովերի վերայ շրջում են առանց առագաստի, առանց թիավարի։ Ցերեկը զբաղեցի երևակայութիւնը մեր առջևը, ամրոցի տակ հոսող գետակի ջրերի նման շարժուն էր և իմ նկարագրած չքեղ տեսարանները նորան հաշտեցնում էին չուելու գաղափարի հետ։

Պայման դրինք, որ հինգ օրուայ մէջ պիտի ձանապարհ ընկնենք։ Վաղը դնում եմ կերտաունա նաւ վարձելու։ Ես կը վերադառնամ, կառնեմ Ֆերիլադէն և միասին կը հասնինք նաւահանգիստը ամրոց չ օրեր մանգալով։ Նորա յոգնելու մասին երկիւղ չունիմ։ Մանուկ հասակից սկսած նա սովոր է ձի նստելու։ Վերջապէս թէ՛ մեր կամքը իր երկիրը ձանապարհով թանկ արժէ ինձ, և վտանգի ժամանակ չունիմ նորա անձնազոհութեան վերայ։

Կերասունտ. 1 Հոկտեմբերի։

Ես հանդիպեցայ նաւահանգստի վերայ ափէ ափ շրջող մի նաւակի տիրոջ, որ ինձ, քանի մի ամիս առաջ, Տրապիզոնից Սիւրմենեհ տարած էր։ Վաղը չէ միւս օրը նորա նաւը պատրաստ կը լինի ինձ համար։ Ես չգայտնեցի նորան դնալու տեղս, բայց համաձայնեցանք, որ նա ինձ պիտի տանէ Սև ծովի նաւահանդիստներից մինը, որ նորան պիտի առնէ նաւարկելու ժամանակ։ Օրեստ պիտի երթամ Ֆերիպադէի հետ միասին։

Վաղուց այստեղ, ես շարունակ օդեղէն պարիսպներ էի շինում։ Ցառաջուց մեր փախուստի հապարատի արկածները էի մտքով վայելում։ Օրեստում նորան եւրոպական շոր կը հագցնեմ, կը սովորեցնեմ նորան եւրոպական ձևով ճաշել, մենք պիտի ծիծաղենք նորա առաջին փորձերի անշնորհութեանց վերայ, յետոյ ճանապարհորդութեան վերջը փայլում է Փարիզի շքեղ տեսքը, որոյ անուանը հասել է Ֆերիպադէի ականջը մինչև նորա միամտական օթևանը։ Աւա՛ղ, դեռ այդտեղ չէի հասել։ Երբեմն երբեմն վայր էի գլորվում բաթմանթոխէ երազներիս միջից և տեսնում էի ինձ գահավէժ անդունդների ափին տրշալ ելիս, որք դեռ շատ աւելի մօտ էին Էվա-լին, քան հայրենեացս։ Ա՛յնուհետև նոր տեսարաններ բացվում էին մտքիս առաջ։ Երևակայում էի ինձ ամրոցի բնակիչների սարսափը, երբ նորա կ'իմանային մեր փախուստը, Իսմայիլ Բէյի բարկութիւնը, այն ընդհանուր անէծքը, որով իմ անունս պիտի առասպել դառնար հովտաբնակների մէջ։ Հակառակ այդ ամենին, ես չէի կարող յետ կանգնել։ Ան հասարակ մարդ ենթարկվում է այն շքեղջանի ազդեցութեան, որոյ մէջ նա ապրում է և մանաւանդ հասարակ դէպի ճակատագիրը հարկադրում է այդպէս. կատարեալ Տաճկի նման ես վճռեցի խոնարհել հանդամանքներին, և ենթարկուել այն ամէն բանին, որ անվախճելի է։

Ես վերադառնում եմ այժմ դէպի Էվլար։ Մինչև այժմ ամէն բան ուզածիս պէս է ընթացել. երանի՛ թէ ապագան յոյսերս ի դիւրև չհանէր։

Տրապիզոն, 20 Յունվարի։

Ինձ մնում է ծանօթացնել ձեզ այն պատահարների հետ, որք

վերջ դրին բաղդախնդրութեանս։ Մի տխուր պատմութիւն է դա, և ընայելով որ արդէն շատ ժամանակ է անցել, ես զգում եմ որ ինձ սրտապնդութիւն է հարկաւոր այդ յիշատակները նորոգելու համար։

Կերասունից վերադառնալով, ես մտայ Էլվարի ձորի մուտքը արևածագից առաջ։ Զորադաշտը դեռ խաւարի մէջ էր ընկղմած. բայց շուտով արեգակը փայլեց արևելքում սարերի գագաթների վերայ։ Ինձանից ներքև ամրոցի որմնատաճները, մինարէթների ծայրերը ներկվում էին վառ դոյներով, մինչդեռ ամրոցի ճեացեալ մասերը ահագին դորշագոյն նկարի նման կամաց կամաց վեր էր լուծում ձորի միջից։ Մի ճառագայթ ընկաւ հարեմի վերևը գտնուող ծառաստանի վերայ. նա իսկոյն ցոյց տուեց ինձ պատնէշի ներքևը, հրապարակի վերայ, զինուորական բանակի վրանները. զօրաբանակը զարթեցնող փողի ձայնը մինչև ինձ հասաւ։ Լոյսը իջաւ քարափների զառիվայրերի վերայօք մինչև ձորի յատակը, ես իսկոյն ճանաչեցի սաճիկ զինուորների հագուստը, որ մեր զաւակների նման էր։ Մի փոքր հեռու տեսայ մի ընդարձակ կտաւէ վրան, որոյ գլխին անցուցած էր կարմիր դրօշակ կիսալուսինը և աստղը վերան։

Ես ձիս քշեցի։ Իմ կառաց թէմիրը ապատում էր ինձ մի խանի (քարվանսարայ) դրանը։ Նա ինձ պատմեց, թէ բացակայութեանս միջոցին Սըվազի նահանգապետը ուղարկել էր հետևակ զօրքի մի գունդ Էլվարը առնելու։ Զօրաբաժիններըը պիշերով անցել էին սարերի անցքերը, ոչք ըստ սովորութեան, պաշտպանած չէին։ Նոյն իսկ Էլվարում ամէնքը քնած էին։ Փէհլևանը, որ ոչ այլ ինչ էր քան փաշայի լրտես, ինքն առաջնորդ էր գարձել գօրքերին, բոլորովին անհոգ էր գտաճանութիւնը ծածկելու, և մոլորել էր նրանց պալատի մէջ, ուսկից և սուրհանդակ անցքի միջով։ Բերդապահ զօրքը, յանկարծակի յարձակման ենթարկուելով, չէր կարողացել դիմադրել. բայց Ռէշը պաշտպանուել է, իր մի քանի հաւատարիմ ծառաներով, ժամացոյցի աշտարակի մէջ. նա մերժում էր լսել նորան ուղարկուած բանագնացներին և յայտնել էր թէ նա կը հաստատէ միայն մեռնել բերդի խրամատի վերայ, քան անձնատուր լինել։ Միևնոյն ժամանակ հրամայել էր իր ադջկան պատապարտուել մերձակայ մի գիւղում, ուր նա դնացած էր մի օր առաջ իր պայեակի և սպասիններով հետ։

Երկար մտածելու ժամանակ չունէի. շտապեցի ճանապարհս

շալուռակել երբ հասայ տաճիկ յառաջապահ պօրքին, որ կը դիմէր կանգնած էին, որպէս կուռի ժամանակ, ինձ բռնեցին, պինթափ ըրին, և պինուռներըը ձիուս պանձը բռնելով տարան պէպի այն վրանը, որոյ դրսին Ցաճանուռմէր օսմանեան դրօշը։ Ա յնտեղ տեսայ նոյն ինքն Սրմանի փաշան, մի լիվայի կամ ռազմապետի կողքին նստած. նա ոտքի ելաւ և շատ քաղաքավարի կերպով ընդունեց ինձ։ Տեսնելով, որ ինձ բերում են իբրև բանտարկեալ, երեսանց ինք պինքը սաստիկ բարկացած ցոյց տուեց ինձ դէմի առնող չաուշի դէմ, երկու երեք անգամ նորան շան որդի կանչեց, և յետ դարձրեց ինձ պէնքս։ Յետոյ ձեռքիցս բռնած նստեցրեց ինձ իւր կողքին պիւանի վերայ և պատմեց, թէ ինչպէս բէյի Ցայրայեղութիւնքը ամէն չափ ու սահման անցած լինելով, Կոստանդնուպօլսից հրաման էր եկել ձնշել մօտալուտ ապստամբութիւնը։

Փաշան, որ շատ ձարտար և շատ կրթուած մարդ է, երևում էր օտարոտի կերպիս շփոթուած իւր պատմաբանութեան մէջ։ Գուռը, որ չէ սիրում թնդանօթներ արձակելով ձնշել, անբաւական պիտի լինէր նորանից, Խամայիլ-Բէյի տաւիճանի մի ծերունու դէմ գործած բռնութեանց համար. հետևաբար նահանգապետը մտածել էր առանց աղմկի ձեռք ձգել նորա անձը և ուղարկել մայրաքաղաք այնպիսի պատուաւոր կերպիւ, որպէս վայել էր նորա բարձր աստիճանին։ Հանգամանքը փոխել էր այդ մտադրութիւնը։ Կամենալով ծերունին ոչինչ չէր ուզում լսել, և երկու օրէ իվեր փաշան տխուր ու տրտում զարձուռմ էր իւր «տէրտողմէնն» մտաւների մէջ, չդիտենալով թէ ինչպէս ազատուի այդ նեղ դրութիւնից։ Ուրևմն ես յարմար ժամանակ վերայ հասայ։ Խամայիլ Բէյի ինձ ցոյց տուած բարեկամական յարաբերութիւնը ոչ ոքի համար գաղտնիք չէր. փաշան հարցրեց ինձ թէ կը ցանկայի՞ արդեօք փորձել իմ հիւրնկալեա մէջ խելացի զգացմունքներ զարթեցնելու։ Առանց վարանելու յանձն առայ։

Ա՛ի սկզբ առաջնորդեց ինձ մինչև ամրոցի մեծ բակը։ Այդ բակը լիքն էր պինուռներով, որք պըտրուած էին թնդանօթները, հրացաններըը և պինթարանի պահպանը ժողվելով։ Ներս մտայ բնակարանը, նա ամայի էր, բայց ոչ մի կարասի տեղից շարժուած չէր։ Փոքրիկ պատուհանով անցած ժամանակ, Ֆերիզպէի սրտած աղաւնին, անշուշտ զարմացած, որ այլևս չէ ընդունում ամէնօրեայ կերակուրը, եկաւ թառ եղաւ ուսիս վերայ, կարծես ձանաչեց իւր ազատիչը։

Համնելով մեծ աշտարակի առաջ, ասպայի պատնէշի վերայ պահապան կեցած քրդերին, թէ կուզէի խօսել նոցա իշխանի հետ։ Գրեթէ իսկոյն դուռը բացուեցաւ։ Աշտարակի սրահում և նեղքնայարկում տեսայ քառասունի չափ լեռնականներ, որոնց միջից մինչև գլուխ զինուած, բայց բոլորովին հանդիստ ու ապատանած։ Կարծում եմ, որ եթէ աշխարքը շուռ գար այս մարդոց վերայ, նոքա չէին դուրս գալ իւրեանց անպրտուելի դրութենից։

Այս տեսայ Բէյը և մօլլան նստած իւրեանց նպատիկէի առջև, առաջնին յարկի մեծ սենեակում։ Մի անկիւնում խափշիկները պատրաստում էին արծաթէ փարչը, որ առաւօտեան լուացման համար էր նշանակած։ Խամայիլ Բէյը, իմ նեղս մտնելը տեսնելով, հեռացրեց նրանց։ Նա ինքն էլ հանդիստ էր, բայց մի դաժան կրակ վայրում էր նորա գոյշ աչքերի մէջ։ Նորա մուշտակի տակ փայլում էին երկու տալձանակների բռնակը. նորա կոդքին շողշողում էր մի հնաձև պարսկական թուր։ Նա ինձ բարի եկար ասաւ։ — Դու վերջին Ֆրանգը պիտի լինիս, ասաց նա, որ կերել է Էլվարի Բէյի հացը։ Առաջինը քոյ հաւատակից մի թաղաւոր էր, որանից շատ ու շատ առաջ։ Օրհնեալ լինի Աստուած։

Ես նորան բացատրեցի փաշայի դիտաւորութիւնները։ — Նա ձեզ խնդրում է, ասացի, գնալ մի փոքր ժամանակ կոստանդնուպօլսում անցկացնել։ Սուլթանը ձեզ կը թողնի ձեր բոլոր հասոյթը, և իբրև բնակարան կը տայ ձեզ Բօսֆօրի իւր պալատներից մինը։

— Երբէք, պատասխանեց նա։

Իզուր չանք սրի ամէն տեսակ պատճառներ մէջ բերել։ — Վիճակել անհնար է, ասացի։ Թնդանօթի մի հարուած կարող էր խորտակել այս աշտարակը, ուր մենք նստած ենք։ Գուցէ ձեզ պէտի առնեն սովատանջ անելով։ Եւ ձեր ընտանիքը . . .

Ֆերիդպէյին վերաբերեալ ակնարկութիւնս կարծես ամենևին չշարժեց նորա սիրտը։ Ճակիկը չէ սիրում որ իւր առաջ իւր տան կանանց վերայ խօսեն. այլև իւրաքանչիւր եռանդոտ մուսուլման ինքզինքը հոգւով շատ բարձր է կարծում, քան թէ նա կարող էր շարժուել հայրական սիրոյ հնչեղն զգացմունքներով։ — Սիրեհատա՛րդ, ասաց նա, ծերունուն խորհուրդներ մի՛ տար։ — Ես այնքան ապրել եմ, որ դիտեմ թէ ինչպէս պիտի ապրել և ինչպէս պիտի մեռնել։ Վերադարձի՛ր հայրենիքդ, երջանիկ եղիր, և մի՛ մոռանար էլ վաղի ծերունի բարեկամդ։ Նա վերկացաւ, տեղեց ինձ իւր գրկի

մէջ և տարաւ ինձ մինչև դուռը, ասելով. — Գնա, որդեակ, Ա-մենողորմածի օրհնութիւնը լինի քեզ հետ։

Մօլան վայր իջաւ հետս։ Երբ մենք միայնակ մնացինք, ես աշխատեցի գոնէ տրան համոզել։ — Իզուր ջանք, ասաց նա։ Ոչ դուք և ոչ ես կարող ենք համոզել Խամայիլ Բէյը։ Այդ միևնոյն էր աշխատել մարմարիոնի վերայ եղէգնի ծայրով փորագրել։

— Լսակ դուք, դուք ի՞նչ էք մտապիր անել։ Նա նայեցաւ ինձ ախուր ժպիտը երեսին։ — Մենք ամէնքս, ասաց նա, գերեզմանի մէջ ենք այստեղ։ Եթէ յարձակուին անեն, և պէտք է որ փաշան այդ անի, որովհետև մեզ պաշարած պահելու ժամանակ չունի, Բէյը մինչև վերջին գնդակի հատնելը կընդդիմանայ։ Յետոյ մենք օդի մէջ կը թռչենք։

Նա իմ զարմանքս հասկացաւ։ — Օ՛, աւելացրեց նա, մենք չափազանց բարի մուսուլմաններ ենք, քան թէ կարող էինք ինքնին մեր ձեռքով մեզ օդը թռցնել։ Ճակատագիրն է, որ իւր վերայ պիտի առնէ վառօդին կրակ տալ։

Նա չուզեց աւելի բացատրել իւր միտքը, — միայն բարեաւ, ասաց նա թողնելով ինձ, ես վերադառնում եմ դէպի Ձերուն իշխանս, որքան դեռ ես մեզ ժամանակ կը մնայ տալերու, մենք դեռ կը խօսենք ձեր մասին։

Փաշան տխրեց երբ նորան հաշիւ տուի դեսպանութեանս անյաջող հետևանքի մասին։ — Ի՞նչ պիտի անել, հարցրեց նա վերայիս։ — Ես չուզեցի չափել նոցա խորհրդակցութիւնը, ուրիշ հոգս՝ ուրիշ տեղ էր կանչում ինձ։ Ես բաւականացայ միայն առաջարկելով նահանգապետին մարդասիրաբար վարուել այդ խորհուրդն ասելուդ էր, փաշայի անձնական շահերն անդամ հակառակ էին բանութիւն գործ դնելուն։ Նա անցաթուղթ տուեց ինձ և ես թէմիրի հետ միասին դնացի կարաքէոյ դիւղը, ուր դիտէի որ պիտի գտնեմ Ֆերիպագէն։

Այդ գիւղը պատսպարած է մի կոշինակի ձորի մէջ, ուսկից կարելի չէ նկատել մօրցը։ Գրեթէ բոլոր բնակիչները, Խամայիլ Բէյին հպատակ լինելով, փախել էին փաշայի վրէժխնդրութիւնից։ Թէմիրին ուզեցի Ֆերիպագէին որոնելու։ Նա վերադարձաւ ու ինձ ասաց, թէ Բէյի տղջկան իւր տղախիններով մուխթարի տանն է։ Անօգուտ էին համոզել պահապաններ տալ նորան. մուսուլմանների

երկրում հարևի արդարությունը աւելի է պահպանում նորան, քան սեփական հրացանները։

Ես կանչեցի պատաւ նեգրուհուն և ասացի թէ, Բէյի կողմից խօսք ունիմ ասելու Ֆերիզադէին։ Այդ մի ծանր հարուած էր տեղական սովորութեանց, բայց ես էվարի հասարակ մարդկանցից չէի. այլև տեսնում էին, որ ես ամրոցից եմ գալիս և հանդամանքների նեղ դրութիւնը կասկածների տեղիք չպիտի տար։ Մի փոքր յետոյ՝ Ֆերիզադէն միայնակ, բայց քօղով ծածկուած, երևեցաւ նեղքնայարկի պատուհանում։ — Պատրաստուի՛ր այս դիշեր ճանապարհ ընկնելու, առաւօտուայ ժամը երեքին մօտ, ասացի նորան։ Ձիերով կը գամ քեզ վերառնելու։ Ճանապարհի վերայ ամէն բան պատրաստ է։

— Իսկ հաիլոս, դու տեսա՞ր նորան։ Ի՞նչ է անում։ Այսպիսի բօզերում ես չեմ կարող մոռանել թողնել նորան։

Ես տեսայ նորան. մի վախենար, նա լաւ է և գօրքերին պատուիրուած է նորան ամենևին ձեռս չտալ։ Ես այս դիշեր աւելի կը խօսեմ քեզ հետ այդ մասին։

Խօսք առած ժամին թողեցի Թէմիրին ձիերի հետ ամայի դիւղի մուտքում և հանդարտ մօտեցայ պատուհանին։ Ֆերիզադէն բացաւ վանդակը։ Ես նորան առայ բաղուկներս վերայ և հանի փողոց. ծանր չէր այդ բեռը։ — Ձշմարիտ, ասաց նա, ես չպիտի երթամ։ Դեռ պատմի՛ր ինձ հօրս մասին . . .

Մինչդեռ նա այս խօսքերն էր ասում, մի մեծ լոյս փայլեց երկնքում, և լուսեցաւ մի խոշոր ձայն, ռմբաձգութեան պայթիւնի նման։ Հովի սլացադնացքը կրկնեցին նորան, յետոյ ամպիճան առ ամպիճան նուազեցաւ և չքացաւ դիշերուան լռութեան մէջ։ Ես ճնայի անշարժ, ես ինքս ինձ հարցնելով թէ արդեօք փոթորի՞կ էր վերկացել հեռուում, և չհանկանալով երկնքի այդ յուզմունքը այնքան խաղաղ ամենորեայ մէջ, յանկարծ մօլլայի վերջին խօսքերը միտս եկան։ — Ամրոցը կործանուեցաւ, մոռացել ես։ — Ես չէի սըխալուել յետոյ տեղեկացայ, որ զինուորները կալէի դուռը կոտրել ներս էին մտել։ Բէյը շարել էր տուել աշտարակի սրահում և նեղքնաց յարկում վառօդով լիք տակառներ, բերաններըը բոլորովին բաց։ Զինուորների խուռմը, իւր մուացած հրամանին հպատակ, չէր հրաժարիլ բայց բաւական էր եղել մի կայծ, որ գոյ մի հրացանի սնդանքարին դիպչելուց կարող էր յառաջանալ, ձայթիւն պատճառելու։

Ֆերիզադէն ժամանակ չունեցաւ իւր զարմանքը յայտնելու — Զգուշացիր — ասաց նա յառաջ մղուելով և ցոյց տալով ինձ կեռնեաս կանդնած մի մարդ, որին ճանաչել տուեց ինձ աստղերի լոյսը. սա դերվիշն էր, որ կառքը վեր քաշած ուղում էր ինձ դաշոյնի հարուած տալ: Ես սուրս քաշեցի, թշնաւոականը փախաւ: Թէմիրը, որ մօտ վազեց կուռի աղմուկի վերայ, նորա ճանապարհը կտրեց. Փէհլեվանը գանդաղեց մի րոպէ, ես մօտ վազեցի, և սրի մի հարուածով ձեղքեցի նորա դլուխը:

Դարձայ Ֆերիզադէի մօտ: Ես գտայ նորան ուշաթափ, պատին դէմ ընկած: Բնականաբար այդ յուզմունքը պէտք էր վերաբերել մեր վերայ գործած վայրենաբարոյ յարձակմունքին: Պէտք էր շտապել փախչելու, եթէ չէինք ուզում հանդիպել ծառաներին, որոնց անշուշտ զայրացրել էր աղմուկը. Ֆերիզադէին նստացրի նորա հաւատարմաւ նշանակուած ձիու թամբի վերայ. ես բռնեցի այնտեղ բարձեր, որ ամէն կողմից կարող էին միջոց տալ նորան հեշտութեամբ դիմանալ արագ սլշաւելու նեղութեանց:—Կարո՞ղ ենք ճանապարհ ընկնել՝ հարցրի նորան:—Նա լռութեամբ ձեռքս սեղմեց: Մենք ճանապարհ ընկանք:

Մի ամբողջ ժամ ճանապարհ գնացինք: Շտւիղը որովհետև բաւական լայն էր, ուստի ես արշաւում էի Ֆերիզադէի մօտով, նորա ձիու սանձը ձեռքս բռնած: Շատ չէր անցել և մենք հովտից դուրս եկած ու էլվարից բաւական հեռու էինք: Յանկարծ նա ինձ կանչեց և խնդրեց մի քանի րոպէ դադար առնել: — Ես ոչինչ եմ, ասաց նա, չեմ կարող յառաջ գնալ:—Վայր թռայ ու վազեցի նորա մօտ: Հարցերիս պատասխանել չկարողանալով նստեց ուսիս վերայ, և ուշաթափուեցաւ: Թէմիրը փռեց ճանապարհի ափին մեր բրդով լցրած վերմակները: Ֆերիզադէին վերարկուներով փաթաթած պառկեցրինք նոցա մէջ: Նորա ուշաթափութիւնը շարունակվում էր: Կասկած վազեց ամենայն կողմ օգնութիւն խնդրելու. իսկ ես, այս դրութեան սարսափից քարացած, չոգած մնացել էի Ֆերիզադէի մօտ՝ աշխատելով յետ բերել կենսական տաքութիւնը, որ կարծես հանգչում էր նորա մէջ:

Վերջապէս Թէմիրը իւր պղնձէ թասով ջուր հասցրեց և հետը բերաւ երկու քուրդ, որոց բնակարանը գտել էր նա մի մղոն հեռու: Արշալոյսը սկսեց երևալ. նա ինձ ցոյց տուեց Ֆերիզադէն գունատ, հազիւ շունչ քաշելիս, և հանդարտ հոգեվարքի լուռ կը-

ռուի մէջ։ Նա հեռացրի վերարկուները և բացի հագուստը. տիֆ-տիկի շապիկը արիւնաթաթախ էր։ Կրծքի վերայ, ուսապլխից փոքր ինչ ցած, զարհուրանքով նկատեցի մի վէրք, աւելի լաւ է ասել մի խայթ, որտեղից հոսում էին արեան կաթիլները. Ֆերիլադէն իւր կուրծքն էր պէտ անել այն հարուածին, որ դերվիշը ինձ համար էր պատրաստել և գաշոյնի նեղ սլաքը ասելի նման թափանցել էր նորա կրծքի մէջ։

Ջուրը մի րոպէ կարծես ուշքի բերեց նորան. նա բացաւ աչքերը, քաշեց ինձ դէպի ինքը և համբուրեց լուռթեամբ. բայց երևի թոքին էր հասել վէրքը. ուժաթափ ընկաւ նա գարձեալ անկողնի վերայ։ Քանի լոյսը բացվում էր, այնքան նորա թշերը գունատվում էին. նորա բաց աչերը կարծես յափշտակուել էին երկնքի տեսարանով։ Նորից բարձրացրեց գլուխը և նորա, սիրոյ և վշտի անասելի ստոյգութեամբ լցուած աչերը ինձ նայեցան։ Գարձեալ վայր ընկաւ ու մի խոր հառաչանք արձակեց։ Նա մեռաւ։

Դեռ խօսքն չկարողացայ ըմբռնել թշուառութեանս չափը։ Առաւօտեան հովը բարձրացնում էր այն թեթև քօղը, որ ծածկում էր այս սպիտակ ու գիւտաբեկ կուրծքը, կարծես ուզում էր յետ գարձնել կեանքի շունչը, որ նոր էր թողել Հեռացել նորանից։ Ընկերներս ծանր ու տխուր դէմքով կանգնած էին առաջս. նայելով նոցա այս սգոյ տեսարանի վերայ ձգած հայեացքին ես տեսայ, որ էլ յոյս չկայ։ Նոքա առաջ ինձ իւրեանց մօտ գրեթէ անպայմանած։

Ֆերիլադէն թաղուեցաւ միւս օրը նոյն տեղում, ուր նա մեռել էր։ Մի նեղ, օլօրոցի նման փորուած ձորակի մէջ. մի քարաշարկաւ ցոյց է տալիս նորա գերեզմանը։ Ամէն անցաւոր իւրեան պարտք է համարում մի քար աւելացնել այս անշուք մեհարձանի վերայ, որ նման է նահապետների կամ հովիւ թագաւորների աղջկանց գերեզմանին։ Իսկ ես դեռ երկար օրեր մնացի այն բարի մարդոց մօտ, որք ինձ ընդունել էին. շատ ամիսներ անցնելուց յետոյ միայն վճռեցի ձանապարհ ընկնել դէպի Եւրոպա։

Թարգմանեց Ց. ԼԱԼԱՑԵԱՆՑ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ *)

Ներկայ տարվայ «Փորձի» I տետրակի սկզբում տպած է պ. Պատկանեանի պատուական յօդուածը — Համառօտ տեսութիւն հայ պատմական-գրականութեան վերնագրով։ Գիտնական հեղինակը այդ յօդուածի մէջ յառաջ է բերում ի միջի այլոց մի համառօտ ցուցակ զանազան տեղերի, ուր գտանվում են հայկական ձեռագիրները շատ կամ քիչ քանակութեամբ։ Այդ ցուցակը չէ, ի հարկէ, լրակատար. և ինքն հեղինակն էլ անշուշտ այդպէս է համարում դորան, որպէս այդ պարզ երևում է յօդուածի վերջաբանութիւնից։ Վատ որոշ աւելորդ չեմ համարում աւելացնել այդ ցուցակի վրա իմ ունեցած տեղեկութիւնները, հրաւիրելով մեր բանասէրներին հետզհետէ լրացնել այդ ցուցակը, որ մեծ նշանակութիւն ունի ազգային մատենագրութեան պարզացման համար։

Պ. հեղինակը ցոյց է տալի Փարիզի ազգային մատենադարանի մէջ (Bibliotheque Nationale) հայոց ձեռագիրների թիւը 260։ Իսկ ես 1877 թ. հինգ ամիս շարունակ պարապելով այդ մատենադարանի մէջ ի միջի այլոց և հայոց ձեռագիրների հետազօտութիւնով, դուցա թիւը դառ 273, որոնց 13 ձեռագրով աւելի։ Ապրիլի մէջ (1878 թ., փետրվար) ես տպեցի իր ժամանակ Փարիզից ուղարկած թղթակցութեամբն մի յօդուած այդ մատենադարանի հայկական ձեռագրների մասին բաւական ընդարձակ տեղեկութիւններով, ուր ցոյց առած եմ ոչ միայն դուցա թիւը, այլ և բովանդակութիւնը ըստ զանազան դիտութիւնների և գլխագրութեան թուականները, որքան այդ յայտնի էր յիշատակարաններից։

Լօնդոնի հռչակաւոր բրիտանական թանգարանում (British Museum) ես տեսայ ձեռագրների բաժնում ապակիպատյալ սեղանի մէջ արևելեան զանազան ձեռագրների շարքում մի հայկական պատկերազարդ ձեռագիր փոքր դիրքով։ Թանգարանի հնութիւնները բացատրող պարոնը ասաց ինձ, որ թանգարանում կան բաւական հայ ձեռագրներ և թէ մի հայ վարդապետի յանձնված է կազմել դուցա նոր ցուցակը։ Յետոյ իմացայ որ դա նոյն Հ. Սուքիաս

*) Տես «Մշակ» 1880 № 46

Պալօնեանն էր, Վենետկի միաբան, որը կազմել էր Փարիզի մատենադարանի հայ ձեռագիրների համար մի անձոռնի և բոլորովին անպէտք ցուցակ հայերէն և ֆրանսերէն, ինչպէս բացատրած եմ «Արարատի» մէջ տպած վերոյիշեալ յօդուածիս մէջ։

Թէպէտ ինձ շատ ցանկալի էր ուսումնասիրել մօտ ծանօթանալ բրիտանական թանգարանի հայկական ձեռագիրների հետ, բայց դժբախտաբար ժամանակիս կարճութիւնը չը ներեց ինձ այդ։

Վենետկում ես ծանօթացայ ուսուցչապետ (պրօֆէսօր) հայդէտ Միւլլերի հետ, որ բաւական լաւ խօսում էր ինձ հետ հայերէն դրաբառ լեզուով։ Դա հրաւիրեց ինձ այցելել Կայսերական Մատենադարանին, ուր ցոյց տուաւ ինձ մօտ 40 հայերէն զանազան ձեռագիրներ, աւելացնելով թէ՝ ինքն ևս ունի իր սեփական մատենադարանի մէջ 10—12 հատ հայ ձեռագիրներ։ — Ի դէպ յիշեմ այստեղ որ՝ պ. Միւլլերը շատ հետաքրքրվում էր հայոց տպած գրքերով և խմանալով, որ ես էջմիածնից եմ՝ մի տու մի համարեց այն գրքերի անուններըը, որ հրատարակված են էջմիածնի տպարանից վերջին 10 տարում։

Պետերբուրգի հասարակական մատենադարանում (Публичная Библіотека) նոյնպէս կան բաւական հայ ձեռագիրներ։

Կան նմանապէս մի քանի հայ ձեռագիրներ և Մոսկվայի Ռումեանցովի թանգարանում (Румянцовскій Музеумъ)։

Իսկ ինչ վերաբերվում է հայերէն հին և նոր տպած գրքերին, (դրա չեն վերաբերվում պ. Պատկանեանցի յօդուածին), դրա կան, դռնեա 2—3 հատով, եւրոպական մինչև անգամ մանր քաղաքների փոքր ի շատէ հարուստ մատենադարաններում։ Այսպէս օրինակ. փոքր Դօթայի (Գերմանիա) քաղաքային մատենադարանի մէջ ես տեսայ մի քանի հատ հին տպագրութեան հայերէն գրքեր։ Նոյնպէս Նօրկնի (փոքրիկ դիւղ հանքային ջրերով Ֆրանկֆուրտ Մային գետի վրա քաղաքի մօտ) փոքրիկ ընթերցարանի մէջ, որ նշանակուած է հիւանդների համար, կար մի հայերէն գիրք։ Վերջապէս՝ Փարիզի և եւրոպական միւս մեծամեծ քաղաքների նշանաւոր գրավաճառանոցներում, այլ և փողոցների մանր գրավաճառների (բուքինիսթ) մօտ դուք շատ անգամ կը պատահէք հայերէն տպած գրքերին։ Նոյնը կինում է Պետերբուրգում, Մոսկուայում, և այլն։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆ

ՆԱՄԱԿԱՎ ՌՈՒԲԻՆԵԱՆԻՑ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԲ, ՊԱՐՈՆԱՑՒ Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆՑ ԵՒ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Ազնիւ սիրելիք, Հայաստանի Բարձր Հայոց Կարնոյ քաղաքին մէջ բացուելիք Ռուբինեան երկրագործական ուսումնարանի համար ռուսիաբնակ մերազնեայ բարեպաշտ և ազնիւ հայ ժողովրդականաց կողմից ցոյց տրուած սիրալիր և քաղցր համակրութիւնը մեծ քաջալերութիւն տուած է ինձ առաւել եռանդեամբ աշխատելու և այնպիսի ժամանելի դժուարութիւնք առ ոտն կոխելու։

Այն հաստատուն նպատակաւ և ուրախութեամբ աշխատած միջոցիս, ազգային լրագրաց մէջ յանկարծ տխուր ձայն բարձրանալով Վանայ և Ալաշկերտի մերազնեայ սիրելի ազգայնոց մէջ պատահած ծանր սովի գոյժը կը տարածուի ի լուր և ի կարեկցութիւն համայն աշխարհի։

Այն աղեխարշ և չարաբաստիկ գոյժը, որ ամենայն մարդասէր և ազգասէր անձանց սիրտը և հոգին կը յուզէ և կը գալարէ, ինձ համար ևս նուիրական պարտք կը համարիմ օգնել և օժանդակել որչափ կը ներէ մեր ձեռնհասութիւն այն համարիւն և համազգի եղբարց և սիրելեաց։

Ուստի հայ ազգին յանուն երկրագործական արուեստի և վաճառականի նուիրատուութեան գումարից, իբրև առաւել ստիպողական և աւելի կարևոր պատշաճ կը համարիմ հազար (1000) ռուբլի յանձնել «Մեղուի» արդեօ խմբագրութեան և հեռագրաւ ուղարկել տալ վերոյիշեալ դժբաղդ ազգայնոց մատակարար յանձնաժողովոյ՝ որպէս զի փոքրինչ դարման տարուի նոցա դառն և ողբալի վիճակին։

Որովհետև պարտաւոր էի դիմել առ ձեզ իբրև հոգաբարձու և գանձապետ, կը խնդրեմ որ ինձ համար ամենակարևոր համարուած սոյն կարգադրութիւնը ձեզ ևս հաճելի լինելով, ձեր հաւանութիւնն ևս կը տայք և պարտ ու պատշաճն կը կարգադրէք ժամ առաջ սոյն մարդասիրական գործը իր նպատակին հասցնելու համար, որով կը յու-

սամ թէ՝ ինչպէս ինձ նոյնպէս և ձեզ և համայն մերազնեայ սիրելի ազգայնոց ուրախութեան պատճառ եղող սոյն գործը առանց այլ և այլի կը տնօրինէք վաղ ընդ վոյթ և կը ծանուցանէք հրապարակաւ տեղւոյդ ազգային լրագրաց մէջ։

*Ըստ այս մասին ես ևս առանձին նամակաւ խնդրած եմ Մեղուի արդոյ խմբագրութենէն, որ պէտք եղած օժանդակութիւնը ընէ, ժամ ցառաջ սոյն փողը ուղարկելու իւրեանց պատկանեալ տիպերը։ *)*

Ընդունեցէք մեր յարգական ողջոյնը։

Ա. Ծ. վ. Ռուբինեանց։

23 Փետրվարի
Քիշնև։

---

*) Արդէն ուղարկուած է այս հազար ռուբլին նշանակուած տեղը։ (Տես «Մեղու Հայաստանեաց» 1880 № 22, էջ 12—13 ծանօթութիւն)

Ս. Խ.

ՑՈՒՑԱԿ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ

Որոնք վաճառվում են Կենտրոնական
գրավաճառանոցում

ԴԱՍԱԳՐՔԵՐ

		Մ.	կ.
1.	Ժողովրդական այբբենարան	»	—5.
2.	Տէր Ղևոնդեան՝ Մայրենի լեզու ա. տ.	»	—35.
3.	. . . . . Մայրենի լեզու, բ. տ.	»	—40.
4.	. . . . . Մայրենի լեզու գ. և դ. տ.	»	—70.
5.	Աղայեանց. Ուսուցիչ Մայրենի լեզուի	»	—15.
6.	Տէր Յակոբեանց՝ Ընթերցարան	»	—25.
7.	Ղուկասեանց ընթերցարան	»	—40.
8.	Շահվերդեանց Նկատողական ուսուցիչ	»	—50.
9.	Ս. Մանդինեանի՝ Նահ. և Հայրենի աշխարհ	»	—65.
10.	. . . Համառօտ Մանկավարժութիւն	1	—50.
11.	Ա յվազեան Գ. Ա. Ն. Նախակրթանք գրաբար լեզուի մ. տ.	»	—40.
12.	. . . . . Նոյն մ. երկ	»	—45.
13.	. . . . . Նոյն մ. երրորդ	»	—50.
14.	Կոստանեանց Հիւսուածք բանից նախ. պատմ. Հայ . .		
	. . . . . Հատ. ա.	»	—75.
15.	. . . . . Նոյն Հատ. բ.	»	—75.
16.	. . . . . Նոյն Հատ. գ.	1	—50.
17.	Նկարագիր պատմութիւն Վարդանանց	1	— »
18.	. . . . . Նոյն Հատարակ թղթի վերայ	»	—80.
19.	Նշանիկ Նշան Աղանդոց	1	— »
20.	Թոռնեան Հատընտիր ընթերցուածք	3	—75.
21.	Մխանսպեան՝ Կան. և վայ. դրութեան տես	»	—60.
22,	Տէր Սարգսեան՝ Վայելչագրութիւն Հայերէն	»	—»
23.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	»	—50.

24. . . . Դոյծնական Քերականութիւն մ. բ. . . . . »—65.
25. . . . . Թրագականութիւն . . . . . »—50»
26. Բահադրեանց Քերակ. աշխարհիկ լեզուի . . . . . »—25.
27. Մ. Սիմէօնեանց Թուաբանութիւն . . . . . »—65.
28. . . . . Ժողովածու. Թուաբ. խնդ. մ. ա. . . . »—50.
29. . . . . Նոյն մ. երկ. . . . . »—50.
30. Մսեր Հաւատոյապատում . . . . . »—25.
31. . . . . Մանր ուսմունք եկեղեց. պատմ. . . . . »—20.
32. . . . . Մանր ուսմունք Սրբազան պատմ. . . . . »—40.
33. . . . . Հրահանգ քրիստ. Հաւատոյ . . . . . »—75.
34. . . . . Քրիստոսապատում . . . . . »—50.
35. Տէր Սահակեան՝ Սկզբունք քրիս. հաւ . . . . . »—50.
36. Օրբէլի՝ Նախաշաւիղ կրօնագիտութեան մ. ա. . . . »—30.
37. . . . . Նոյն մեծն երկ . . . . . »—50.
38. . . . . Համառօտութիւն հին և նոր կտակարանի . »—30.
39. . . . . Դասատետր եկեղեց. պատմութեան . . . . »—90.
40. Պ. Սիմէօնեանց Սրբ. պատմ. հին կտակարանի . . . »—60.
41. . . . . Նոյն—Նոր կտակարանի . . . . . »—60.
42. . . . . Դաս. ընդհ. պատմութեան մ. ա. . . . . »—80.
43. . . . . մ. երկ. . . . . »—70.
44. Շանշեանց Քրիստ. պատմութիւն . . . . . 1—10.
45. . . . . Ուսումն պարտուց . . . . . 1—10.
46. Շահնազարեանց Ծրագիր Հայոց պատմութիւն . . . »—80.
47. Տէր-Աբրահամեան Համառօտ պատմ. Հայոց . . . . . 1—»
48. Աբովեանց Համ. Հայոց Ազգի պատմութիւն . . . . »—60.
49. Պէրպէրեան Պատմութիւն Հայոց . . . . . 2—»
50. Բուրգեր Համառ. դաս. Աշխարհագրութեան . . . . »—25.
51. Պ. Ուսանողների Բաղդատական աշխարհագրութիւն . 1—»
52. Դիտերվէգ՝ Սկզբ. երկչափութեան . . . . . »—40.
53. Տէր-Աբրահամեան՝ Բանալի առաս. լեզուի . . . . »—50.

Եւ այլն, և այլն, և այլն։